

9(47 925)  
74-26

1933



31 AUG 2007

Ա. ԽԱՆՁՅԱՆ

ՄԵՐ

ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ

ՊԱՅՔԱՐԻ

ՀԻՄՆԱԿԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԿՈՒՍԿՐԱՏ  
ՅԱՐԵՎԱՆ-1933

60-26

Ա. ԽԱՆՉԵԱՆ

Մ Ե Ր  
ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԻՆԴԻՐՆԵՐԸ

ՎԱՒՍՆՎԱՏ  
1933 ՅԵՐԵՎԱՆ



Գ 7659-73

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԼՈՒՍԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՅԱՍԱՏԱՆՅԱՆ  
Հ-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ 1933 թվի ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ  
ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԸ

Հնակերներ,

Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի հանձնարարությամբ ամենաջերմ կոմունիստական վող ջույն եմ հաղորդում ձեզ և ձեր միջոցով՝ Հայաստանի խորհրդային ուսուցչությանը: (Բուռն ծափահարություններ):

Կենտրոնը ջերմագին վողջունում ե ձեզ, վորպես սոցիալիզմի կառուցման մեծ բանակի ամենակարևոր ջոկատներից մեկի ներկայացուցիչներին, այն ջոկատի, վորի վրա պրոլետարական հեղափոխությունը և պատմությունը դրել են խոշորագույն և պատասխանատու պարտականություն: Այդ պարտականությունն ե՝ բարձրացնել աշխատավորական մասսաների կուլտուրական մակարդակը, ոգնել նրանց տիրանալու գիտությանը և տեխնիկային: Պրոլետարական հեղափոխությունը «ժառանգություն» ստացավ կուլտուրայի, տեխնիկայի բնագավառում ահռելի հետամնացություն, մասսաների զրեթե համատարած անգրագիտություն: Ցարական Ռուսաստանում նախքան պրոլետարական հեղափոխությունը ազգաբնակության մեկ հինգերորդ մասն եր միայն գրագետ: Միայն այս ցուցանիշը բավական ե՝ հասկանալու համար, թե ցարական կարգերում ինչչան հետ եր մոռմ մեր յերկիրը առաջավոր յերկըներից: Զե՞ վոր աշխատավորական մասսաների կուլտուրական հետամնացության, նրանց տգիտության մեջ եյին տեսնում նախկին տիրող դասակարգերն իրենց իշխանության ամրացման, աշխատա-

մորական մասսաների շահագործման համերժացման հիմնական պայմաններից մեկը:

«Մենք 50—100 տարով հետ ենք մնացել առաջավոր յերկրներից: Այդ տարածությունը մենք պետք եւ կորենք տաս տարում: Կամ կանենք այդ, կամ մեզ կճղմեն»—այսպես եր դնում խնդիրը կուսակցության և բանվոր դասավել մեծ առաջնորդը 1921 թվի սկզբին: Այդ թոփչքը կարգի մեծ առաջնորդը 1921 թվի սկզբին: Այդ թոփչքը կատարելու հիմնական պայմանն եւ տիրապետել տեխնիկային, վորովհետեւ վերակառուցման շրջանում տեխնիկան վճռում և ամեն ինչ: Տիրանալ գիտությանը, տիրապետել տեխնիկային՝ այդ նշանակում և արդեն կանխորոշել մեր վերջնական հաղթանակը, վորովհետեւ վերջնական հաղթանակն ապահովելու համար մեզ պակասում և միայն այդ:

Վերջին ժամանակաշրջանում,—ինչքան ել կարճ և պատմության չափանիշով 2—3 տարին,—մեր յերկիրը՝ Խորհրդային Միությունը հսկայական թոփչք կատարեց դեպի առաջ: Բոլորիդ հայանի յեն սոցիալիստական առաջին հսկայակի կատարման արդյունքները, վորոնք ամփոփվեցին կենտկոմի հունվարյան պատմական պլենումում ընկերականի կողմից: Առաջին հնդամյակի արդյունքները ցույց տվին, թե ինչ հաջողությամբ, ինչ սրարշավ թափով առաջ և վազում մեր յերկիրը՝ պատմական ամենակարճ ժամանակաշրջանում կարելուանցներս համար մեր և առաջավոր յերկրների միջև ընկած տարածությունը, ուրիշ խոսքով՝ վերացնելու համար մեր հետամնացությունը, կատարելու համար «համանելու և անցնելու» լենինյան մեծ պատղամը, թույլ տվեք բերել վերջերս հրամարակած, մեր տնտեսական վերելքը բնորոշող յերկու թիվ միայն: Խորհրդային Միությունը, յերեկով այդ հետամնաց, գյուղատնտեսական կիսանահապետական յերկիրը՝ շնորհիվ կուսակցության վարած ինդուստրիացման քաղաքականության՝ այսոր առաջին տեղում է գրավում Յելլուսարիա ամբողջ աշխարհում արդյունաբերության մի շարք կարևորագույն ճյուղերի ցուցանիշը յերկու ամենը, ինչ վոր անհրաժեշտ և մեր արդյունաբերության և ամենաառաջին տեղերից մեկը ինդուստրիապես զարգացած առաջավոր յերկրների շարքում, նա արտադրում և սեփական գործարաններում, սեփական միջոցով և նյութերով, իր խորհրդային կազմերով, խորհրդային մասնագետների ղեկավարությամբ այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ և մեր արդյունաբերության և վերակառուցվող գյուղատնտեսության համար, այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ և մեր կարմիր բանակի անպարտելի հզորությունն ամրացնելու համար: Բայց պատմության եջերը վերջին տարիներում՝ արձանագրում են վոչ միայն տնտեսական-կուլտուրական նմանը և նախընթացը չունեցող վերելք կառուցվող սոցիալիզմի հսկայերում, նրանք լցում են վոչ միայն մասսայական հերոսության, անձնվեր, լարված աշխատանքի անթիվ և անհամար փաստերով՝ Խորհրդային Միության բոլոր շրջանների, բոլոր մարզերի աշխատանքի և շինարարության

տնտեսական մեքենաշինության, տրակառների, իսկ վերջին որերս նաև չուպունի արտադրության գծով մենք զբաղեցնք առաջին տեղն ամբողջ աշխարհում: Եթեկտրոներդիայի գծով 1928 թվի 10-րդ տեղի փոխարեն այժմ արդեն 4-րդ տեղն ենք գրավում Յելլուսարիայում, քարածեսի գծով՝ 6-րդ տեղից անցանք 3-րդ տեղը, ավտոմոբիլների արտադրության գծով՝ 12-րդ տեղից անցանք 4-րդ տեղը: Արդյունաբերության ընդհանուր արտադրանքի ծավալի տեսակետից՝ մեր յերկիրը գրավում է Յելլուսարիայում առաջին, իսկ աշխարհում 2-րդ տեղը, այն ժամանակ, յերբ 1928 թվին բռնում եյինք հազիվ 5-րդ տեղը: Յելլուսարիայում բոլորը մի յերկրում, վորը մի քանի տարի սրանից առաջ միայն, նախքան առաջին 5-ամյակը, ամենաաննախանձելի դրության մեջ եր արդյունաբերության զարգացման տեսակետից, ուր բոլորովին գոյություն չօւնեցին արդյունաբերության մի շարք կարևորագույն ճյուղերը. մի յերկիր, վարչական սահմանական պաշտպանության արդիական սպառագինում արտադրելու համար: Առաջին 5-ամյակի հաղթական ավարտումով՝ մեր յերկիրը գրավում և ամենաառաջին տեղերից մեկը ինդուստրիապես զարգացած առաջավոր յերկրների շարքում, նա արտադրում և սեփական գործարաններում, սեփական միջոցով և նյութերով, իր խորհրդային կազմերով, խորհրդային մասնագետների ղեկավարությամբ այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ և մեր արդյունաբերության և վերակառուցվող գյուղատնտեսության համար, այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ և մեր կարմիր բանակի անպարտելի հզորությունն ամրացնելու համար: Բայց պատմության եջերը վերջին տարիներում՝ արձանագրում են վոչ միայն տնտեսական-կուլտուրական նմանը և նախընթացը չունեցող վերելք կառուցվող սոցիալիզմի հսկայերում, նրանք լցում են վոչ միայն մասսայական հերոսության, անձնվեր, լարված աշխատանքի անթիվ և անհամար փաստերով՝ Խորհրդային Միության բոլոր շրջանների, բոլոր մարզերի աշխատանքի և շինարարության

մասին, նրանք արձանագրում են նաև անկման ու գահաւիրժման սոսկալի այն պատկերը, վոր ունի կապիտալիստական աշխարհը՝ իր ընդհանուր ճգնաժամի, անխռուսափելիորեն մոռեցող իր վախճանի այս շրջանում, Դիմենք կրկին թվիրի լեզվին: 1928 թվի արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալն ընդունելով՝ 100, 1932 թվին Խորչը գրգային Միության մեջ այդ ցուցանիշը բարձրանում է 218-ի, իսկ կապիտալիստական յերկրներում իջնում է 67-ի: Միայն այս համեմատությունը բավական ե՝ հասկանալու համար պատմության զարգացման առաջիկա ուղիները: Այու, ընկերներ, կապիտալիստական աշխարհն ապրում է իր վերջալույսը: Քանի գնում այնքան ավելի թանձրանում է խավարը յերկրագնդի այդ մասում, այն ժամանակի, յերբ 15 տարին միայն բոլոր Խորհրդային Միությունը առնականում է և հզորանում՝ վերացնելով ամեն մի կասկածայն մասին, վոր նա ընդունակ է հաղթել կապիտալիստական յերկրներին թե «խաղաղ» մրցակցության պայմաններում և թե զենքը ձեռքին, յեթե կապիտալիստական յերկրները փորձեն դիմել զինված հարձակման Խորհրդային Միության դեմ: Յերկու դեպքեն ել կանխորոշված կապիտալիզմի պարտությունը:

Անբուժելի յե կապիտալիզմի զառամության ներկա համատարած ախտը, ծայր աստիճան սրված են կապիտալիզմի բոլոր հակասությունները, զանգված է կապիտալիզմի «թիկունքը»: Կապիտալիզմի արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների ծայր աստիճան սրված հակասությունների միակ յերը հեղափոխության միջոցով արտադրական հարաբերությունների ներկա կաշկանդիչ կեղեկի պատուին ե, կապիտալիզմի սահմաններում չպարփակվող արտադրողական ուժերին համապատասխանող նոր, սոցիալիստական արտադրական հարաբերություններ հաստատելու և: Ինչքան ուղղում են, թող խորհրդակցեն կապիտալիզմի «փրկիչներին» ու «քժիշկները», թող հրավիրեն հագարումեկ կոնֆերանսներ զինաթագման մասին կամ ճգնաժամի խորացման առնելու համար, որանց չի հաջողվի քողարկել նոր իմպերիալիստական պատերազմների, հակախորհրդային ինտերվենցիայի սրաբա-

տությունները. Պատերազմի վորոտները լսվում են արշեն Հեռավոր Արևելքում, նոր պատերազմների վորոտները դաշտով ավելի սուրբանալի յեն դառնում: Կապիտալիզմի «փրկիչներին» չի հաջողվի վոտի հանել մահամերձ հիփանդին, կասեցնել կապիտալիզմի անկման կորագիծը: Մույլ ամպեր են կուտակվում կապիտալիստական աշխարհի յերկնակամարում, ավելի և ավելի ննդանում և այն փակուղին, ուր միսրճվել են կապիտալիստական աշխարհի հսկաները: Անտանելի յե դառնում աշխատավորական մասսաների կացությունը: Գործազուրկների տասնյակ միլիոնավոր բազմություններ մի կտոր հացի կարոու սովաման դրության մեջ են, այն ժամանակ, յերբ ամբարներում փտում, արհեստականորեն փչացվում են հարյուրավոր միլիոն փութ հաց և բարիք:

Յերկու աշխարհի, յերկու սիստեմի հակադիր պատկերն աչքի յե ընկնում նաև տեխնիկայի և գիտության ընագուագուում: Մենք զարկ ենք տալիս տեխնիկայի զարգացման, մենք առաջադրում ենք վորպես կարևորագույն խնդիր՝ աիրանալ տեխնիկային՝ հեշտացնելու համար մարդու աշխատանքը, տիրելու համար բնության տարերքը, ոգտագործելու համար բնության բոլոր ուժերն աշխատավոր մարդկության ինպատ: Այստեղ, կապիտալիստական յերկըներում գտնվում են մարդիկ, գտնվում են գիտնականներ, պետական գործիչներ, գորոնք լրջորեն միջոցներ են խորհում և առաջարկում՝ կանգնեցնելու համար տեխնիկայի աճումը, կրամատելու համար մեքենայի դերը տնտեսության մեջ: Մենք զարկ ենք տալիս գիտության բոլոր ճյուղերի զարգացմանը, այնտեղ մարդիկ լրջորեն առաջարկում են «արձակուրդ տալ գիտությանը»: Բայց թե ինչ աստիճանի վայրենության, բարքերի ինչ բարբարոսության կարող ե հասցնել գլուխը կորցրած, կործանվող կապիտալիզմը՝ այդ յերեւմ և փաշխտական Գերմանիայի որինակով: Այստեղ Փաշխտական խարույկների կրակին ճարակ են դառնում մարդկային գիտության ամենաբարձր արդյունքները, գրական դասական գործերը: Մինչեւ վերջին մանրամասնությունը վերականգնվում է միջնադարյան առոտողագիտեն, ծավալվում է նույնիսկ ցարական Ռուսաստանին անսովոր

մասին, նրանք արձանագրում են նաև անկման ու գահաւիժման սոսկալի այն պատկերը, վոր ունի կապիտալիստական աշխարհը՝ իր ընդհանուր ճգնաժամի, անխռուսափելիորեն մոտեցող իր վախճանի այս շրջանում։ Դիմենք կրկին թվերի լեզվին։ 1928 թվի արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալն ընդունելով՝ 109, 1932 թվին նոր հրդային Միության մեջ այդ ցուցանիշը բարձրանում է 218-ի, իսկ կապիտալիստական յերկրներում իջնում է 67-ի։ Միայն այս համեմատությունը բավական ե՝ հասկանալու համար պատմության զարգացման առաջիկա ուղիները։ Այո, ընկերներ, կապիտալիստական աշխարհն ապրում է իր վերջալույսը։ Քանի գնում այնքան ավելի թանձրանում է խավարը յերկրագնդի այդ մասում, այն ժամանակի, յերբ 15 տարին միայն բոլորած նորհրդային Միությունը առնականանում է և հզորանում՝ վերացնելով ամեն մի կասկած այն մասին, վոր նա ընդունակ է հաղթել կապիտալիստական յերկրներին թե «խաղաղ» մրցակցության պայմաններում և թե զենքը ձեռքին, յեթե կապիտալիստական յերկրները փորձեն դիմել զինված հարձակման նորհրդային Միության դեմ։ Յերկու դեպումն ել կանխորոշված և կապիտալիզմի պարտությունը։

Անբուժելի յե կապիտալիզմի զառամության ներկա համատարած ախտը, ծայր աստիճան սրված են կապիտալիզմի բոլոր հակասությունները, վատանգված և կապիտալիզմի «թիկունքը»։ Կապիտալիզմի արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների ծայր աստիճան սրված հակասությունների միակ յերքը հեղափոխության միջոցով արտադրական հարաբերությունների ներկա կանգնդիչ կեղեկի պատռեն ե, կապիտալիզմի սահմաններում չպարփակվաղ արտադրողական ուժերին համապատասխանող նոր, սոցիալիստական արտադրական հարաբերություններ հաստատեն ե։ Ինչքան ուղղում են, թող նորհրդակցեն կապիտալիզմի «փրկիչներն» ու «բժիշկները», թող հրավիրեն հաղարումնել կոնֆերանսներ զինաթափման մասին կամ ճգնաժամի խորացման առաջն առնելու համար, նրանց չի հաջողվի քողարկել նոր իմակերիալիստական պատերազմների, հակախորհրդային ինտերվենցիայի պատրաս-

տությունները։ Պատերազմի վորոտները լովում են արդեն չեռավոր Արևելքում, նոր պատերազմների վորոտները գնալով ավելի սովորականի յեն դառնում։ Կապիտալիզմի «փրկիչներն» չի հաջողվի վոտի հանել մահամերձ հիվանդին, կասեցնել կապիտալիզմի անկման կորագիծը։ Մոայլ ամպեր են կուտակվում կապիտալիստական աշխարհի յերկնակամարում, ավելի և ավելի նեղանում ե այն փակուղին, ուր միանվել են կապիտալիստական աշխարհի հսկաները։ Անտանելի յե գառնում աշխատավորական մասսաների կացությունը։ Գործազուրկների տասնյակ միլիոնավոր բազմություններ մի կտոր հացի կարոտ սովաման դրության մեջ են, այն ժամանակ, յերբ ամբարներում փառում, արհեստականորեն փչացվում են հարյուրավոր միլիոն փութ հաց և բարիք։

Յերկու աշխարհի, յերկու սիստեմի հակադիր պատկերն աչքի յե ընկնում նաև տեխնիկայի և գիտության բնագավառում։ Մենք զարկ ենք տալիս տեխնիկայի զարգացման, մնաք առաջաղջում ենք վորպես կարևորագույն խնդիր՝ աիրանալ տեխնիկային՝ հեշտացնելու համար մարդու աշխատանքը, տիրելու համար բնության տարերքը, ոգտագրծելու համար բնության բոլոր ուժերն աշխատավոր մարդկության ինպատճեան Այնտեղ, կապիտալիստական յերկրներում զտնվում են մարդիկ, գտնվում են գիտնականներ, պետական գործիչներ, վորոնք լրջորեն միջնորդներ են խորհում և առաջարկում կանգնեցնելու համար տեխնիկայի աճումը, կրծատելու համար մեքենայի գերք տնտեսության մեջ։ Մենք զարկ ենք տալիս գիտության բոլոր ճյուղերի զարգացմանը, այնտեղ մարդիկ լրջորեն առաջարկում են «արձակուրդ տալ գիտությանը»։ Բայց թե ինչ աստիճանի վայրենության, բարքերի ինչ բարբարության կարող է հասցնել գլուխը կորցրած, կործանվող կապիտալիզմը՝ այդ յերկում և Փաշիստական Փերմանիայի որինակով։ Այնտեղ Փաշիստական խարույկների կրակին ճարակ են դառնում մարդկային գիտության ամենաբարձր արդյունքները, դրական դասական գործերը։ Մինչեւ վերջին մանրամասնությունը վերականգնվում է միջնադարյան առւտողագիւն, ծավալվում ե նույնիսկ ցարական Ռուսաստանին անսովոր

խժդուժ մի հալածանք հանրահոչակ զիտնականների դես, բռնկվում են ազգային առելության, ամենասոսկալի շոփին կղմի վայրենի կըքերը: Յեկ յեթե կապիտալիզմի կործանման, կապիտալիզմի պայմաններում բարքերի վայրենացման այս Մջանում խողորագույն զիտնականները, խոշորագույն գրականագետները նախատեսում են կապիտալիզմի մայրամուտը, գտնում են զրությունն անելանելի, ապա քանի գնում, այնքան ավելանում ե այն զիտնականների, այն գրականագետների, այն մտավորականների թիվը, վորոնք փրկության միակ յելքը պրոլետարական հեղափոխության մեջ են գտնում արդեն: Նրանք՝ միացած սրբութարիատի և գյուղացիության հեղափոխական ջոկատներին՝ պայքարում են էպալիտալիզմի դեմ, հույսի միակ աղյուսը համարում են Խորհրդային Միությունը, վորի յերկնակամարը ջինջ ե և մաքուր ճգնաժամի ամպերից, վոր բերում ե վողջ յերկրագնդին, ամբողջ մարդկությանը ազատություն, ուր բանվոր գասակարգը բարձրացըրել ե զիտության դրոշը, ուր զիտությունը, տեխնիկան, կուլտուրան՝ ազատված կապիտալիստական հասարակակարգի կաշկանդիչ կապանքներից՝ համուսմ են չտեսնված բարձրության, պատմության մեջ նմանը և նախընթացը չունեցող ծաղկման:

Վերցնենք, ընկերներ, մեր յերկիրը, Խորհրդային Հայաստանը: Խորհրդային Միության այս փոքրիկ մեկ մասի փորձն իսկ բավական ե՝ գաղափար կազմելու համար մեր յերկրում կուլտուրական հեղափոխության հոկա ծավալի և խորության մասին: Չեմ խոսում այն դրության, կուլտուրական այն հետամնացության մասին, վոր տիրում եր մեր յերկրում նախքան նոյեմբերը. այդ մասին արդեն առիթունեցել ենք մանրամասն խոսելու:

Կուլտուրական հեղափոխությունը մեր յերկրում մենք ծավալի և ծավալում ենք՝ յելնելով մեր կուսակցության ազգային քաղաքականության պահունչներից: Հիշենք ընկ ՍՏԱԼԻՆի հետեւյալ դրությը. «Ազգային կուլտուրայի լուգունգը՝ բուրժուազիայի եպօխայում, մենք համարում ենք բուրժուական լոգունգ: Ինչնու: Վորովինետե բուրժուական տիրապետության Մջանում ազգային կուլտուրայի լոգունգը նշանակում ե՝ ազգությունների աշխատա-

վոր մասսաներին յենթարկել բուրժուազիայի ղեկավարությանը, նրա տիբապետությանը, նրա ղիկտատուրային: Պրոլետարիատն իշխանությունը զրավելուց հետո մենք հոչակեցինք, խորհուրդների հիման վրա, ԽՍՀՄ-ի ժողովուրդների ազգային կուլտուրան դարձացնելու լոգունգը: Ինչ ե նշանակում այդ: Այդ նշանակում ե, վոր մենք ԽՍՀՄ-ի ժողովուրդների մեջ աղդային կուլտուրայի զարգացումը հարմարեցնում ենք սոցիալիզմի շահերին և պահանջներին, պրոլետարական ղիկտատուրայի շահերին և պահանջներին, ԽՍՀՄ-ի աշխատավոր ազգությունների շահերին և պահանջներին: Միթե այդ նշանակում ե, թե այժմ մենք դեմ ենք ընդհանրապես ազգային կուլտուրային: Ղոչ, չի նշանակում: Այդ մէսայն նշանակում ե, վոր այժմ մենք կողմնակից ենք ԽՍՀՄ ժողովուրդների ազգային կուլտուրային, աղդային լեզվի, դպրոցի, մամուլի և այլն՝ զարգացմանը խորհուրդների հիման վրա: Իսկ ինչ ե նշանակում «խորհուրդների հիման վրա» վերապահումը: Այդ նշանակում ե, վոր ԽՍՀՄ-ի ժողովուրդների կուլտուրան, վորը զարգացնում ե խորհրդային իշխանությունը, իր բովանդակությամբ պետք ե լինի բոլոր աշխատավորների համար ընդհանուր կուլտուրա, սոցիալիստական կուլտուրա, իսկ իր ձևով ե և կլինի ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդների համար վոչ միատեսակ կուլտուրա, աղդային կուլտուրա, ԽՍՀՄ-ի ժողովուրդների համար տարբեր կուլտուրա՝ համաձայն լեզվի տարբերության և ազգային առանձին առանձնահատկությունների» (ՍՏԱԼԻՆ):

Կուլտուրական շինարարության աշխատանքները Հայաստանում մենք առաջ ենք մղել և մղում ենք՝ ղեկավարվելով սոտալինյան այս ցուցումներով: Արդյունքներն ակնհայտ են: Կույրերն անդամ տեսնում են խոշորագույն այն աշխատանքը, վոր ծավալվել և ծավալվելու և կորհըրդագյին Միության բոլոր ազգային հանրապետություններում և մարզերում՝ ազգային կուլտուրայի ստեղծման և զարգացման գծով: Սկսենք մեր հրատարակչությունից հրատարական գործը Հայաստանում հասել և այնպիսի մի ծավալի, վորի մասին յերազել անդամ անհնար եր ուրիշ վորեւ պայմաններում՝ բացի խորհրդային իշխանության

պայմաններից. քանակի տեսակետից ամեն տարի մենք հրատարակում ենք այնքան անուննետառը գիրք, ինչքան նախքան Նոյեմբերը տասնյակ տարիների ընթացքում Մենք հրատարակում ենք մայրենի լեզվով դասագրքեր վոչ միայն տարրական և միջնակարգ դպրոցի համար, այլ նաև ուսումնական բարձրագույն հիմնարկների համար։ Մենք հրատարակում ենք վոչ միայն արդի խորհրդանայ և խորհրդային գրականություն, այլ նաև լայն ծրագրով մեր գրականության դասական գործերը։ մենք թարգմանել և հրատարակում ենք հայերեն, մեր բոլոր բանվորներին, աշխատավորներին, մտավորականներին մատչելի դարձնելու համար, մեր մեծ ուսուցիչների վողջ ժառանգությունը, Մարքսը, Ենգելսը, Լենինը, Ստալինը։ Միայն մեր Քետհրատի, Կուսնբատի, Գյուղհրատի հրատարակությունների ցուցակը բավական և գաղափար կազմելու համար դրականության ծավալի մասին, իրավ վոր վիթխարի այն աշխատանքի մասին, վոր ծավալվում ե մեզ մոտ կուլտուրական շնորհության, ձեռվ ազգային՝ սոցիալիստական կուլտուրայի կերտման գծով։

Վերցրեք թատրոնական գործը. գեղարվեստական դարձման տեսակետից նաև գտնվում ե այնպիսի մի բարձրության վրա, վոր բացարձակապես անհամեմատելի յետնացյալի հետ. մեր թատրոնները վոչ միայն հաղորդակից են անում աշխատավորական մասաներին ժամանակակից խորհրդային դրամատուրգիայի լավագույն գործերին, վոչ միայն գաղափարի կարկ են տալիս սեփական դրամատուրգիայի դարձման, նրանք վերամշակում են մեր թատերական կլասիկներին, նրանք նոր մոտեցումով բեմադրում են Սուլուգուկյանցին և Պարոնյանին, մի մոտեցում, վոր բարձրացնելով նրանց ստեղծագործությունների չմեռնող գեղարվեստական արժեքը՝ բաց և անում նրանց բովանդակության ամենակարենը կողմերը, վոր սվաղում եր նախկին բուրժուական և մանր-բուրժուական թատրոնը։ Մեր թատրոնները մատչելի յեն դարձնում մասաներին պրոլետարական մեծ դրող Գորկուն, նրանք աշխատում են Շեքսպիրի վրա այնպիսի խնամքով և խիզախությամբ, վոր պատիվ կբերի վորեական առաջավոր հեղափոխական թատրոնի։

Վերցրեք մեր կինոն, վոր վերջերս տօնեց իր գոյության առաջին տասնամյակը. այստեղ նույնպես հաղթահասուելով առանձին սայթաքություններ և սխալներ՝ կիրառվում ե ստալինյան ֆորմուլան՝ աղջային ձեռվ պրոլետարական արվեստ ստեղծելու մասին։ Հայկինոյի վերջին արտադրությունները, նրա ծրագրած և ձեռնարկած նոր գործերը, ինչպես մեր արդիական պայքարն ու աշխատանքը վերարտադրող, նմանապես և դասական լավագույն յերկերի վերամշակման ուղղությամբ («Գետո», «Գիքոր» և այլն), ցույց են տալիս, վոր նաև գտնվում ե ճիշտ ուղու վրա։

Քիչ բան չի կատարվում յերաժշտության բնագավառում—աշխատում են աճող յերաժշտական կաղըեր, ծավալվում ե յերաժշտական հրատարակչությունը։ Կազմակերպեցինք ոպերան, վորի աշխատանքի առաջին փորձը ցույց տվեց մեր յերաժշտական կուլտուրայի աճումը, բայց նաև այն, վոր անհրաժեշտ ե ավելի յերկար նախապատրաստական աշխատանք՝ սեփական կազմելու, բարձր վորակի ինքնուրույն ոպերա ունենալու համար։

Չեմ խոսում մեր մամուլի, մեր կուլտուրական շինարարության այլ ճյուղերի մասին, վորտեղ նույնպես կատարվում ե աչքի ընկնող աշխատանք։ Բայց ամենից կարեւոն այն ե, վոր կուլտուրական շինարարության բոլոր աշխատանքների հիմքը կազմող յերկու վճռական աշխատանքների գծով՝ անդրագիտության վերացման և ընդհանուր պարտադիր ուսման գծով մենք վերջին տարիների ընթացքում, ամենից առաջ մասսայական ուսուցչության յեռանդուն աշխատանքի շնորհիվ, ձեռք բերինք ամենախոշոր, պատմության մեջ արձանագրելիք նվաճում։ Մեր յերկիրը, շնորհիվ անդրագիտության վերացման աշխատանքների և պարտադիր ուսման ծավալման, մտնում ե համատարած դրագիտության առաջավոր յերկրների շարքը. այս մեր աշխատանքներում ամենաեյտական, գլխավոր նվաճումներից մեկն ե։

Ընկերներ, յես խոսեցի այն մասին, վոր կուլտուրական շինարարության բոլոր աշխատանքներում մենք ղեկավարվել ենք Ենինեղմի սկզբունքներով, ընկ. Ստալինի հանճարեղ ցուցումներով։ Բայց առանց պայքարի չե, վոր

իրականություն ե դառնում ձևով աղքային, բովանդակությամբ սոցիալիստական մեր նոր կուլտուրան։ Մենք հըսկում ե պայքարում ենք, վոր դիմակավորված զասակարգացին թշնամին կուլտուրական շինարարության բնագակառամբ չխախտի մեր դիմք, չանցկացնի իր ձգտումները։ Մենք պայքարում ենք մեծապետական շովինիզմի դեմ, վոր ձըրտում ե նսեմացնել մանր ժողովուրդների կուլտուրական զարգացման, աղքային ձևով զարգացման վճռական նշանակությունը, վորը վերից վար արհամարհանքով ե նայում մանր ժողովուրդների կուլտուրական շինարարության խընդիրների վրա, վորը, ուրիշ խոսքով, արտահայտելով նախկին իշխող աղքության տիրող դասակարգերի իդաերն ու հղումները, աշխատում ե դաստորդին ուսենել ու ամրացնել այն անհավասարությունը, վոր մինչև հեղափոխությունը տիրում եր իշխող աղքության և ձնշված աղքությունների միջև։ Հիշում եք, ընկերներ, վ. Վահանյանին։ Այսոր արդեն հակակուտակցական, հակահեղափոխական ճահճն ընկած Վահանյանն եր, վոր ընկ. Ստալինից «պաշտպանելով» ինտերնացիոնալիզմը,... ասում եր—ինչ աղքային պրոլետարիատ, ինչ աղքային կուլտուրա. համաշխարհային պրոլետարիատը մեկ ե և անբաժան, նա պետք ե ունենա մեկ և անբաժան կուլտուրա։ Այսոր ծիծաղելի յե նույնիսկ լսել այս հակալենինյան բարբաջանքը. կուտակցությունը, ընկ. Ստալինի զեկավարությամբ, ջախճախելով մեծապետական շովինիզմի արտահայտությունները, ձեռք բերեց աղքային հանրապետությունների կուլտուրական զարգացման այն նվաճումները, վորով այսոր իրավամբ պարծենում ենք։ Մենք, ընկերներ, ավելի բարձր զգաստությամբ պետք ե շարունակենք պայքարը մեծապետական շովինիզմի արտահայտությունների դեմ, պետք ե աշալուրջ հսկենք, վորովի մեծապետական շովինիզմի «հերոսները» չկարողանան աղքեցություն ունենալ մեր կուլտուրական շինարարության վորեւել բնագավառում, իսկ նրանք կան, նրանք վեռ զգացնել են տալիս իրենց։ Միայն մի որինակ. վերջերս մեր Պետհարատը հրատարակել ե Դուրյանի յերկերի մեկ փոքրիկ ժողովածուն։ Գտնվեցին, բանից դուրս ե գալիս, մարդիկ և նույնիսկ... կոմունիստներ, վորոնք փորձ արին սվինով

դիմավորել այդ գործը. իբր թե ինչ կարիք կա, մեր ինչ գործն ե տպագրել Դուրյանին։ Ծիծաղելի կլինիկը լուրջ վեճի բռնվել այդ մարդկանց հետ, զորովհետեւ նրանց հարցագրումը, վոր ամենից առաջ արդյունք ե տպիտության, մեծապետական շովինիզմի ցայտուն մի արտահայտությունն ե։ Վորովհետեւ վնր պիտները չկիտի, վոր մենք չե, վոր պիտի թքենք անցյալի կուլտուրական ժառանգության վրա, վոր մեր պարտքն ե քննադատության վերամշակել այդ ժառանգությունը, տալ նրան մարքս-լենինյան գնահատականը, քննադատորեն յուրացնել այդ ժառանգության դեմոկրատական տարրերը։ Մենք ավելի ուժեղ զարկ պիտի տանք մեր զբական կլասիկները հրատարակելու և նրանց կոնկրետ կերպով քննադատելու գործին։ Մեծապետական շովինիզմը՝ թագնված կեղծ ինտերնացիոնալիզմի փետուրաների տակ՝ ավելորդ ե համարում մեր անցյալի, մեր պատմության ուսումնասիրությունը։ Զենք կարող չարձանագրել վոր մեզ մոտ նման ձգտումներ կարողացել են միաժամանակ տեղ գտնել Այլապես ինչով բացատրել այնպիսի մի յերկույթ, վորպիսին եր մեր գլորցների ծրադրում մեր անցյալի, մեր ժողովրդի պատմության դասավանդության բացակայությունը։ Մենք ուղղում ենք այդ սխալը, մենք առաջարկեցինք լուսուղղության այս իսկ ուսումնական տարվանից մտցնել հայոց պատմությունը՝ մարքս-լենինյան լուսաբանությամբ, վորպես գլորցների գասավանդան կարեսը առարկաներից մեկը։ Վերակազմակերպելով այս տարվանից պետական համալսարանը՝ մենք ինդիք ենք գնում պատրաստել մեր սոցիալիստական-կուլտուրական շինարարության մարքս-լենինյան ուսմունքով զինված կադրեր, այժ նաև համալսարանի աշխատանքներում ավելի լայն ծավալ տալ մեր անցյալի մարքս-լենինյան ուսումնասիրության աշխատանքներին։ Նույն այդ նպատակն ե հետապնդում մեր հայկական խորհրդային հանրագիտարանը, վորի առաջին հատորը պատրաստվում ե տպագրության։

Կոչ անելով մեր կուլտուրական հեղափոխության մարտիկներին՝ լինել զգաստ մեծապետական շովինիզմի արտահայտությունների դեմ, կեղծ ինտերնացիոնալիզմի դեմ, յես անմիջապես պիտի շեշտեմ մեր հետեւյալ կարեսորագույն

պարտականությունը—անխնա լինել և ջարդուփշուր անել հայկական նացիոնալիզմի ամեն մի արտահայտություն, նացիոնալ-դեմոկրատական ամեն մի տեսնդենց։ Նացիոնալ-ուկոնիստները, նացիոնալ-դեմոկրատներն ամեն կերպ հարմարվելով պայմաններին, փորձ են անում շեղել մեր կուլտուրական աշխատանքներն ուղիղ, լենինյան ճանապարհից։ Նրանք ձգտում են վոչ միայն ազգային ձև, այլ նաև աղքային բովանդակություն տալ մեր կուլտուրային։ Յեթև մենք գնում ենք մեր անցյալը քննադատորեն վերլուծելու, վերագնահատելու խնդիրը, նրանք գնում են այդ անցյալը կուրորեն պաշտելու, իդեալականացնելու գծով։ Նրանք հնդկահամի պես փերական անցյալի փառքերից։ Նրանք հակադրում են մեր ժողովուրդը հարևան ժողովուրդներին։ Նրանք մեր աշխատավորության վոխերիմ թշնամիների՝ դաշնակների ազենտներն են և գործակիցները։ Նրանք ձըդտում են վերջին հաշլով անջատել մեր ժողովուրդը պըռավետարական հեղափոխությունից և վերականգնել բուրժուազիայի տիրապետությունը։ Այս թե ինչու կործանիչ պիտի լինեն մեր հարվածները նացիոնալ-դեմոկրատիզմի գեմ, նրա ամեն մի արտահայտության դեմ։ Լենինյան պայքար մղելով յերկու ֆրոնտի վրա յե, վոր պիտի կարողանանք ապահովել մեր կուլտուրական շինարարության հետազավելի բուռն աճումը և ծավալումը։ Այս պայքարումն ե, մեծապետական շովինիզմի և հայկական նացիոնալիզմի դեմ ուղղված պայքարումն ե, վոր պիտի ստուգել մեր կուլտուրական կազմերի գասակարգային կոփածության չափը։

Ընկերներ, յես արդեն խոսեցի այն նվաճումների մասին, վոր ունենք անզրագիտության վերացման և պարտութիր ուսման արմատավորման ասպարեզում։ Անվիճելի յեն մեր հաջողություններն այս ուղղությամբ։ Սակայն սխալ կլիներ, ընդգծելով հաջողությունները, կանդ չառնել նույն այս աշխատանքներում դոյցություն ունեցող բացերի և թերությունների վրա։ Այդ թերությունները գեռ կան, նրանք դեռևս խոշոր չափով իշեցնում են մեր աշխատանքների գործնական արդյունքները։ Վերցրեք պարտադիր ուսումը, այստեղ կիրառելով կուսակցության կենտրոնի և կառավարության հայտնի վարչումները դպրոցի աշխատանքների

բարելավման, ծրագրերի և դասագրքերի կայունացման, ուսուցչի զեկավար դերի և պատասխանատվության բարձրացման ուղղությամբ՝ մենք ունենք դրական տեղաշարժեր և նկատելի հաջողություն։ Սակայն այնուամենայնիվ դեռ ցածր և մեր ուսման վորակը. ուսումնական տարվա սկզբունքի ուսման հասակի բոլոր յերեխաներին՝ մենք տարվա ընթացքում վորոշ մաղում ենք տալիս, մի յերեսույթ, վոր նսեմացնում ե պարտադիր ուսումը կիրառելու խոշորագույն նշանակությունը։ Կամ անզրագիտության վերացումը.—ծախսելով խոշոր միջոցներ, ուժերի ծայրահեղարման գնով, հիմնականում վերացրել ենք մեր աշխատավորության անզրագիտությունը։ Սակայն մենք կանգ ենք առնում անզրագիտության վերացման աշխատանքների վրա, չենք շարունակում սիստեմատիկ աշխատանք նոր գրագետ դարձածների մեջ, և հետեւանքը լինում է անզրագիտության վերակրկնման, ուցիղիվի բավական տարածված յերեսույթը։ Ի՞նչ յեզրակացություն պետք է անենք այս բոլորից։ Այս, վոր պիտի ավելի մեծ ուշադրություն դարձնել վորակի վրա, վորակը պետք է գառնա մեր ուշադրության և աշխատանքի կենտրոնը։ Հեղափոխությունը և պիտությունը հանձնարարել են ձեզ, ընկերներ, ամենապատասխանառու գործը—մեր մատաղ սերնդի սոցիալիստական դաստիարակության գործը։ Յեթե բանվորից և զյուղացուց մենք պահանջում ենք վորակ և ամենից առաջ վորակ, ապա վժրքան ավելի սուր կերպով այս խոնդիրը պետք է գրվի ձեր առաջ, ձեր, վոր գործ ունեք, վոր աշխատում եք վոչ թե իրերի, այլ կենդանի մարդկանց վրա, վոր պատրաստում եք սոցիալիստական հասարակակարգի մարտիկներին։

Ընկերներ, մեր ուսուցչության մեծամասնությունը կազմում են զյուղական ուսուցչները։ Առանձնապես պատասխանառու յե նրանց գերը այն խոնդիրների կապակցությամբ, վոր ծառացել են մեր կուսակցության առաջ գյուղական աշխատանքների ասպարեզում։ Բոլորիդ հայտնի յե կոլեկտիվացման վերջնական և վճռական հաղթանակը Խորհրդային Միության մեջ։ Դուք ականատես եք մասսայական այն ըեկման, վոր առաջ և զալիս կոլտնտեսային զյուղացիության մեջ, նրա վերաբերմունքի մեջ դեպի կոլ-

ւնտեսային աշխատանքը։ Այն, ինչ վոր առաջ յեկավ այս  
դպրնան, մասսայական դյուղացիության տրամադրության  
մեջ թեկման սկիզբն և միայն։ Այժմ, յեթե իրենց  
դիրքերում լինեն մեր բայլշեհիկյան կազմակերպություննե-  
րը գյուղում, ավելի արագ թափով առաջ կերթա մեր կոլ-  
տանտեսականների, յերեկվա այդ մանր սեփականատերերի  
սոցիալիստական վերադաստիարակման պրոցեսը։ Բայց նմա-  
նապես այստեղ, ինչպես նաև մեզ ոյուս բոլոր աշխատանք-  
ներում, պետք է վերացվի ինքնահուը, պետք է բայլշեհ-  
կյան գեկավարություն և ձեռներեցություն։ Այստեղ ե ահա,  
վոր բարձրանում և գյուղական ուսուցչի դեմքը վրապես  
հիմնական աշխատողի, վորը թե մատադ սերնդի և թե աշ-  
խատավորության մեջ պետք է ծավալի իրական կուլտու-  
րական աշխատանք՝ յենելով գյուղական աշխատանքի  
ընդհանուր խնդիրներից։ Այդ խնդիրներն են՝ ամրացնել  
կոլտնտեսությունը, ջախջախել կուլտակին մինչև վերջը, ար-  
մատացնել աշխատանքային կարգապահությունը, բարձր  
արտադրողական աշխատանքը կոլտնտեսություններում, բաշ-  
խել յեկամուտը միայն ըստ աշխատանքի քանակի և վո-  
րակի, վերացնել ծուլությունը և լողությունը կոլտնտե-  
սություններում, ամրացնել կոլտնտեսային սեփականու-  
թյունը։ Գյուղական ուսուցիչը կոչման բարձրության վրա  
չենի, յեթե մի կողմ քաշվի այդ խնդիրներից, չեղոքանա  
դպրոցի չորս պատերում։ Յեղ գյուղոցական անմիջական  
աշխատանքներում և գոլրոցից դուրս, վորպես կուլտուրա-  
կան հասարակական գործիչ՝ գյուղական հարվածային ու-  
սուցիչը պետք է ջանք չինայի՝ ամրացնելու համար սո-  
ցիալիզմի դիրքերը գյուղում։ Պետք ե ընդունենք, ընկեր-  
ներ, վոր գենուս անբավարար դրության մեջ են մասսայա-  
կան-քաղաքական աշխատանքները գյուղում։ Վատ և աշ-  
խատում խրճիթ-ընթերցարանը, կոլտնտեսակումը, գյուղա-  
կան կինոն, վատ և զրված ազրովը պահանջի գործը, մա-  
մուլի տարածման և ոգտագործման գործը գյուղում։ Այս-  
տեղ նմանապես մենք պահանջ ունենք ձեզանից։ Գյուղա-  
կան ուսուցիչը պետք է ժամանակ և միջոց գտնի՝ ակտիվ  
կերպով մասնակցելու գյուղում ծավալվող մասսայական-  
քաղաքատիարակչական աշխատանքներին։ Կենտկոմի վեր-

ջին վորոշումները և կուստողկոմանի ձեռնարկումները խըլ-  
ճիթ-ընթերցարանների վերակառուցման, նրանց նյութա-  
կան միջոցների ավելացման ուղղությամբ՝ լայն հնարավո-  
րություններ են ընձեռում։ Միայն պետք և ավելի հարգա-  
ծային աշխատանք, ավելի բարձր, մարտական տրամադրու-  
թյուն, ավելի համառ պայքար՝ հաղթահարելու համար գժվա-  
րությունները, և մենք նոր ու ավելի խողոր հաջողություն-  
ներ ձեռք կրերնեք գյուղական աշխատավորական մասսա-  
ների կուլտուրասոցիալիստական դաստիարակման գործում։  
Ընկերներ, այսոր տարրորինակ կլիններ խոսել մեր  
մասսայական ուսուցչության տրամադրությունների մա-  
սին, ինչպես մի ժամանակ արվում եր, լոյալության կամ  
բեկման մասին։ Լոյալությունը կամ բեկումը մեր մասսա-  
յական ուսուցչության տրամադրությունների գնահատման  
համար արդեն վաղուց անցած ետապ և Պարծանքով կարող  
ենք ասել, վոր մասսայական ուսուցչությունն արդեն մերն  
ե, մեր՝ բանվորա-գյուղացիականը, խորհրդայինը։ (Բուռն  
ծափահարություններ)։ Մենք տեսնում և գնահա-  
տում ենք մասսայական ուսուցչության հարգածային աշ-  
խատանքը գժվար պայմաններում։ Բայց չի նշանակում  
այդ, թե կարելի յե իջեցնել մեր դասակարգային զգաս-  
տությունն այդ ուղղությամբ։ Վճռ, ընկերներ, դասակար-  
գային թշնամին փորձում և դեռ գործել վարոշ գեղքերում  
ուսուցչի դիմակի տակ։ Ինչպես յերեսում ե, կան դեռ հատու-  
կենա մարդիկ, թշնամի և խորթ մեր գործին, մեր կարգե-  
րին, մեր նպատակին, վորոնք խցկվել են ուսուցչության  
շարքերը։ Ահա ձեղ վերջերս դիմակազերծ արված Տարագ-  
րուս, վոր խորհրդային տեխնիկումի ուսուցչի դիմակի տակ  
տանում եր խկական հականեղափխական ագիտացիա  
աշակերտների շրջանում։ Նա բարասում եր, թե առաջին  
ծամյակը քաղցի ծամյակ եր, թե՝ «յեթե հինգ մատները  
կհավասարվեն, սոցիալիզմն ել կկառուցվի» և այլն։ Հետա-  
քըրքեր ե, վոր դիմակազերծ արվելուց հետո այս  
մարդն իր բացատրագրի մեջ գրում է հետեւյալ գլուխ-գոր-  
ծոցը։ «Ինչ վերաբերում է սոցիալիզմ կառուցելու նկատ-  
մամը, յես դեռ շատ վագուցադիմումների խորհրդային  
իշխանությունը չկար, վոր ընկերական շրջանում ասել եմ

և ասում եմ, վոր վերջին հաղթանակը սոցիալիզմինն են, նույնիսկ բերել եմ ցիտատ հին գրքերից գրաբար—յեղիցի մի հոտ և մի հովիվ, այսինքն՝ մի դասակարգ և հասկացողություն։ (Ծիծաղ)։ Անա ձեզ սոցիալիզմի կառուցման տարագրույան հիմնավորումը։ Հենց միայն այս հոտն ու հովիվը՝ միթե բավական չեւ տեսնելու Տարագրուի տիրացուական հականեղափոխական ներքին եյությունը։ Ճիշտ են վարվել մեր ընկերները, վոր համել են նրան ուսուցչի պաշտօնից։ Խորհրդային ուսուցչի կոչումը բարձր կոչում է և այդ կոչումը պետք է բարձր և մաքուր պահել չթողնելով, վոր այդ կոչման տակ թագնված մեր թշնամիները հաւականափոխական գործ կատարեն։

Ընկերներ, յերկու խոսք ել մեր ուսուցչության նյութական դրության մասին։ Մենք դիմենք, վոր մասսայական մեր ուսուցչության դրությունը դեռ հեռու յեւ իդեալական լինելուց, մենք դիմենք, վոր պարտավոր ենք, —այդ և յեղել ինինի վերջին ավանդներից մեկը, —նյութական շատ ավելի լավ գրության մեջ դնել մեր խորհրդային ուսուցչին։ Մեր խորհրդային ուսուցչությունը դիմակցաբար տարել եւ տանում ե մի շարք դժվարություններ, վորովհետու նա պարզ տեսնում ե մեր դարդացման ուղիները, վորովհետեւ նա ըմբռնում ե, վոր այսորվա նեղությունների գնով ե, վոր մենք կերտում ենք վաղվա որը, սոցիալիզմի վերջնական հաղթանակի որը, յերջանիկ, անդասակարգ սոցիալիստական հասարակությունը։

Անա թե ինչու, ընկերներ, կուսակցությունը և կառավարությունը շարունակելով միջոցներ ձեռք առնել՝ ավելի բարելավելու համար մասսայական ուսուցչության նյութական-կենցաղային պայմանները, միաժամանակ կոչ են անում ձեզ՝ ել ավելի սերտ համախմբվել կուսակցության և բանվոր դասակարգի շուրջը, կոչ են անում ձեզ՝ լարել բուրր ուժերը, չխնայել վոշինչ պատվով կատարելու համար ձեր պատմական պարտականությունը՝ համընթաց շարժվել բանվոր դասակարգի հեղափոխական մեծ բանակի առաջավոր ջոկատների հետ, բայց լեկիկայն կուսակցության ղեկավարությամբ, մինչև վերջնական հաղթանակը։ (Բուռն, յերկարատեւ ծափահարություններ)։

## ՄԵՐ ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(ԿՈՒՆՏՊՐՈՊՐԵՍՎԵՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՈԲՀԵԿԱՑՈՒԹՅԱՆ 1932 թ. ՀՈՒՆԴԻ 4-ԻՆ ԱՐՏԱՍԱՆԱՄ ՀԱՌԱԿ)

### ԸՆԿԵՐՆԵՐ,

Մեր խորհրդակցության նպատակն ե մանրամասն քննարկել մարքուլենինյան դաստիարակության հերթական խնդիրները և ապա տարրական ու միջնակարգ դպրոցների վերակառուցման գործը, ուրիշ խոնքով ասած՝ պարտադիր ուսման կիրառումը Հայաստանում։ Այս հանգուցային հարցերի ճիշտ լուծման համար պետք է յելակետ ունենալ ավյալ շրջանում մեր կուսակցության առաջդրված հիմնական խնդիրները։ Հայտնի յեւ, վոր մեր կուսակցության պատմության ամբողջ ընթացքում իդեոլոգիական ֆրոնտը միշտ ել գրավել ե կենտրոնական տեղ։ Կուսակցության լենինյան գծի անաղարտության համար մղվող պայքարը, թշնամական իդեոլոգիական հոսանքների ամեն տիպի և յերանգի ոպորտունիստական «թշնամական բարերի մերկացնելու և ջախջախելու գործը, բանվորական և առհասարակ աշխատավորական տարրերին թշնամի իդեոլոգիաների աղեցության շրջանակից հանելու և մեր կուսակցության լենինյան գծի շուրջը կազմակերպելու, համախմբելու աշխատանքը միշտ ել յեղել ե մեր կուսակցության ընդհանուր պայքարի կարևորագույն ու անբաժան մասը։ Մեր կուսակցության պատմության մեջ իդեոլոգիայի խնդիրները յերբեք կարբուծ չեն յեղել հեղափոխական պրակտիկայից։ Սոցիալիզմի հաղթանակի համար բանվոր դասակարգի կողմից մղվող ընդհանուր պայքարի մի կարևոր ճակատամասն ե իդեոլոգիական ֆրոնտը։ Մեր կուսակցությունը միշտ ել անխնահարվածել ի ինչպես գործամոլությունը, մարքսիստական-

լենինյան թեորիայի թերագնահատման զանազան արտահայտությունները, նույնպես և իդեոլոգիական խնդիրները հեղափոխական պրակտիկայից կտրելուանջատելու փորձերն ու տենդենցիները:

Իդեոլոգիական ֆրոնտի խնդիրները, այսպիսով, բըղվում են սոցիալիզմի կառուցման տվյալ ետապում կուսակցության հիմնական խնդիրներից։ Հետևապես, այդ ֆրոնտի հիմնական խնդիրները բնորոշելու համար յելակեա պիտի ընդունենք սոցիալիստական շինարարության հերթական խնդիրները՝ կապված այն սոցիալ-տնտեսական տեղաշարժերի հետ, վոր կատարվում են մեր յերկրում պլոտետարական հեղափոխության ներկա ետապում։

ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆ ԵՎ ՀԱՄԱՅՆԵԼ ՅԵՎ ՍՆՅԱՆԵԼ ԱՌԱՋԱՎՈՐ ԿԱՊԻՏԱՆԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻՑ

Պայքարելով յերկու ֆրոնտի վրա, ծավալելով անխնապայքար ներկա ջրչանի գլխավոր վտանգ աջ թեքման, ինչպես նաև «ձախ» խոտրումների գեմ, մեր կուսակցությունը հաղթականորեն առաջ ե մզում սոցիալիստական հասարակակարգի հիմքերի կառուցումն ավարտելու աշխատանքը։

Յոթմղնյան քայլերով առաջ ե գնում մեր յերկրի սոցիալիստական խնդումտրիացումը։ Մեկը մյուսի հետեից գործի յեն անցնում նորանոր գիտանտներ, Խորհրդային Միությունը դառնում ե մետաղի, տրակտորի, ավտոմեքենայի առաջավոր յերկիր։ Կապիտալիստական տարրերը գրեթե ամբողջությամբ գուրս են մղված։ Նրանք վոչնչացված են արդյունաբերության բնագավառում։

Գյուղատնտեսության մեջ մեր կուսակցությունն ապահովեց գյուղացիության շրջադարձը գեղի սոցիալիզմ։ Խորհրդային Միության մեջ կոլտնտեսություններն ընդգրկում են 15 միլիոն գյուղացիական տնտեսություն։ Յերեկզա մանր ու ցիրուցան, անհատական գյուղական տնտեսություններն անվերադարձ կերպով առաջ են շարժվում խոշոր, տեխնիկական նոր հիմքերի վրա կառուցվող, սոցիալիստական տնտեսությունների ուժաներով։

Համատարած կոլեկտիվացման հիման վրա վերացվում ե կուրակությունը վորակես դասակարգ։

Հիմնական խնդիրը, վոր առաջադրում ե այսոր բանվոր դասակարգը մեր յերկրում, այդ այն ե, վոր սոցիալիստական ընդհանուր հարձակողականի հետագա ծավալումով պատմականորեն ամենակարճ ժամանակամիջոցում վերացնենք Խորհրդային Միության տեխնիկական-տնտեսական համեմտատական հետամեմացությունը, ինչպես շեշտեց ընկ։ Ստալինը՝ մաքովմում տաս տարում անցներով այն տարածությունը, վորով մենք գետ հետ ենք մնում կապիտալիզմի տեխնիկական առաջավոր յերկրներից։ Համաշխարհային-պատմամական նշանակություն ունեցող այդ խնդիրը վճռելու բոլոր հսարավորությունները մենք ունենք։ Յեկայիթե շատ տեղերում ու ողակներում լիովին չեն սպառագործվում այդ հսարավորությունները, խորհրդային սիստեմի բոլոր դրական առանձնահատկություններն ու առավելությունները, ապա դրա պատճառը պիտի վորոնել զեկավագան և մաս և ան երի կազմակերպման գործի թերթյունների մեջ։ Հայաստանում ևս որեցոր աճում ե մեր արդյունաբերությունը, կառուցվում են նոր գործարաններ։ Սակայն մեր գործարանների մեծ մասը դեմք թերական տարվա պլանները, պահանջված տեմպով չի ընթանում նոր շինարարությունը, կապիտալիզմը ներդրումները ժամանակին և լրիվ չեն իրացվում։ Հիմնական պատճառն այստեղ աշխատանքի վոչնչացնոնալ կազմակերպումն ե, մասսաների աշխատանքային ենատես գիտական անբավարար գլխավորումը, բանվորական ուժի հավաքագրման և պատրաստման գործն ուղղությունիստական ինքնահոսի թողնելը, ընկ։ Ստալինի հայտնի ցուցումների իրագործման առաջմմ թույլ ընթացքը։

Վերցնենք կոլտնաշինարարության բնագավառը։ Համար պայքար մղելով կուրակության և կուրակային-դաշնակցական տարրերի գեմ, շեշտը դնելով կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական աշխատանքների վրա, վերջերս մենք առաջ բերինք նոր բեկում կուրանշինարարության բնագավառում։ Հայաստանի գյուղական տնտեսությունների 35 տոկոսն արգեն կոլեկտիվներունն ե, կու-

տնտեսային շարժման ավելի բարձր տեմպի ապահովումը պահանջում և վերացնել կոլտնտեսային աշխատանքի կազմակերպման բոլոր թերությունները, անշեղորեն կիրառել դրժավարձը, լայն պայքար ծավալել բերքատվության բարձրացման համար, ուշադրության կենտրոնակետ դարձնել կոլտնտեսային մասսայի կուլտուրքաղաքական դաստիարակման գործը:

Ահա թե ինչու, ինչպես շեշտաց ընկ Պոստիշկը մարքսինինյան դաստիարակության հերթական ինդիրներին նվիրված իր ճառում, աշխատանքի բոլոր բնագավառներում և ողակներում տվյալ շրջանի հիմնական խնդիրն են վերակառւցել ղեկավարությունը համաձայն նոր պայմանների, ավելի կոնկրետ հիմքերի վրա դնել տիրապետել տեխնիկային, ամելի բարձր աստիճանի վրա դնել մասսաների կազմակենապահությունը և նրանց ակտիվ պայքարի համել դասակարգային թշնամու և նրա իդեոլոգիական բոլոր տեսակի սողուկումների դեմ, վճռելու համար կենտրոնական ինդիրը, այն են պատմականորեն ամենակարև ժամանակամիջոցում տեխնիկական-անտեսական տեսակետից համել ու անցնել առաջավոր էտապիտալիստական յերկրներից:

Նույն այդ ինդիրների լուծման գործին պետք է ծառայեն ամբողջապես նաև մասսաների իդեոլոգիական վերադաստիարակության բոլոր լծակները:

### ԱՎԵԼԻ ՇԵՆՏԱԿԻ ՀԱՐՎԱԾ ԴԱՇՆԱԿԻԶՄԻՆ

Իդեոլոգիական Փրոնտում մեր հիմնական անելիքն են թշնամական իդեոլոգիաների՝ իրենց բաղմակիսի ձևերով և արտահայտություններով՝ հայտաբերումն ու հաղթահարումը: Միայն բայլշեկյան անհաշտ պայքարով են, վորմենք կարողանում ենք ցրել այն մշուշը, վոր աշխատում են առաջացնել բութուազիան և նրա կամակատարները՝ մթագնելու աշխատավոր մասսաների դասակարգային գիտակցությունը, խանդարելու լայն մասսաների ակտիվ մասնակցության այն պայքարին, վոր մղվում ե կուսակցության գլխավոր գծի կիրառման համար:

Իդեոլոգիական Փրոնտում, թշնամական իդեոլոգիական

հռուսանքների շարքում Հայաստանի բանվորության և ամերով աշխատավորության համար հիմնական թշնամին եր և մուս և Դաշնակցությունը: Դուք հիշում եք—շատ ժամանակ անցել այն շրջանից—այսպես կոչված հին ղեկաչի անցել այն շրջանից—այսպես կուրքից մեր կուսակցության համագումարների կողմից վորպես նացիոնալ-ռուկլոնիստական թեքման ճանապարհի վրա կանգնած ղեկավարություն, կան թեքման ճանապարհի վրա կանգնած ղեկավարություն, նույնպես մեր կուսակցության վորոշ ղեկավար ընկերների միջն ծայր եր առել սխոլաստիկական մի վեճ մեր անհաջող թշնամու հականեղափոխական Դաշնակցության սոցիալական եյության մասին: Դաշնակցության հավատարիմ զինակից և ըստ եյության նրա գաղափարախոռ Դավիթ Անանունի հետքերով ընթացող մի շաբք կոմունիստներ մզնում եյին 1917 թիվը, վորպես իր սոցիալական եյությամբ մանր բութուական կուսակցություն: Մեր կուսակցությունն արժանի հականերված հասցըց թշնամիների աղղեցության ակտական կարենություն ստեղծելով մեզ մոտ քաղաքական հսկայական կան կարենություն ներկայացնող այն հարցի շուրջը, որինեկտիվորեն բթացնում եր մեր պայքարի ղենքը և մասսաների գասակարգային ատելությունը դեպի Դաշնակցությունը: 1928 թվին կենտկոմի նոյներյան պիեռում իր հայտնի բանաձեռում տվեց Դաշնակցության սպառիչ ու ճշգրիտ բնութագիրը: «Դաշնակցությունը սպառիչ ու ճշգրիտ բնութագիրի իդեությունը: Նա կարտահայտին ու մարտական կուսակցությունը: Նա կատարել ե և կատարում է համաշխարհային իմպերիալիզմին սպասավորելու ամենաստոր պաշտոնը: Դաշնակիզմը բութուական աղղայնական շուրջիստական հականեղափոխական կան իդեոլոգիային և նա հայ իրականության ֆաշիզմն եւ Յելլինց այդ իրականության մեջ Դաշնակցությունն ամենահականեղափոխական ուժն ե, խորհրդային իշխանության ու մեր յերկրի աշխատավորության առավելագույն վտանգավոր թշնամին, վոր միջազգային իմպերիալիստների վորակենքով կաշառված ու զենքերով սպառազինված՝ պատկենելով կաշառված

րաստ ե իր իմպերիալիստական տերերի առաջին իսկ հրամանով հարձակվել ԽՍՀՄ և Խորհրդային Հայաստանի վրա»; Դաշնակցության անցյալի և ներկայի ճիշտ պատկերը տվող այս գնահատականը ամենալայն մասսաների սեփականությունն է այսոր: Միայն անուղղելի ոպորտունիստները դեռ մինչև այժմ ել շարունակում են, կամա թե ակամա, դերի մնալ դասակարգային թշնամու իդեոլոգիական արևենալից սնվող Դաշնակցության սոցիալական ելության մանր-բուժուական կոնցեպցիային: Հայաստանի բանվարազյուղացիական ամենալայն մասսաները չունեն վորև կասկած Դաշնակցության սոցիալական դիմագծի նկատմամբ. Նրանք գիտեն, նրանք տեսնում են, վոր Դաշնակցությունը միշտ ել հանդես է յեկել հայ բուրժուազիայի, կուլակության շահերի պաշտպանի, իմպերիալիստների հլու կամակատարի սարք գերում: Դաշնակցության «ընթացիկ կուրս» այսոր դալիս ե մի իսկապես վոր ավելորդ անգում հաստատելու մեր կուսակցության սպառիչ գնահատականը. Դաշնակցության սոցիալական դիմագծի նկատմամբ: Սոցիալիզմի հղթական կառուցումը Խորհրդային Միության մեջ և նրա մասնիկը կազմող Խորհրդային Հայաստանում, Դաշնակցության հիմնական հենարան՝ կուլակության մոտալուս և անխուսափելի վերացումը, վորպես գասակարգի, կապիտալիզմի ընդհանուր կրիզիսի անընդհատ խորացումը և բանվորական-շխատավորական մասսայի, նաև արտասահմանի հայ աշխատավորության դասակարգային գիտակցության բարձրացումը, —պայմաններ են, վորոնց ֆոնի վրա ավելի վորոշակի յև հանդես գալիս Դաշնակցության, վորպես հայ բուրժուազիայի ռազմաենչ կուսակցության և անզլու ֆրանսական իմպերիալիզմի լրտեսական գործակալության, իսկական դեմքը:

### ՄԵՐ ՎՈԽԵԲԻՄ ԹՇՆԱՄՈՒ ՄԵՐԵՆԱՌԵՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կանգ առնենք Դաշնակցության «ընթացիկ կուրսի» մի քանի ողակների վրա:

Դաշնակցության ներկա կուրսի հիմնական նպատակներից մեկը — արտասահմանում «ազգային միասնական ֆրոնտ» ստեղծելու ջանքերը—նպատակ ունեն հաստատել

Դաշնակցության հեգեմոնիան նացիոնալիստական այլ կուսակցությունների վրա և ամրողապես ուղղված են առշըրդային Հայաստանի դեմ, կազմելով պատրաստվող հակախորհրդային իմպերիալիստական ինտերվենցիայի ընդհանուր ծրագրի մի մասնիկը: Միրիայում «ազգային ոչախ» ստեղծելու համար դաշնակների արած գործնական քայլերը, վորոնք, ի գեպ, արվում են անզլու ֆրանսական իմպերիալիստական խմբակներին մոտ կանգնած կյուլպենկյանների անմիջական հովանավորությամբ և հակադրվում են արտասահմանի գաղթական աշխատավորության Խորհրդային Հայաստան ներկաղթելու մեջ ծրագրին, նպատակ ունեն «հավատարիմ ուժ» տրամադրել ֆրանսական իմպերիալիզմին Միրիայի գաղութային շահագործման և տեղական ժողովուրգների ազգային-ազտագրական շարժումները ճնշելու, ինչպես նաև կյուլպենկյանի նավթահանքերին կամ նավթամուղին եժան բանվորական ուժ մատակարարելու համար: «Ազգային ոչախ» ստեղծելու այդ փորձի գլխավոր նպատակն եւ թնդանոթի միս պատրաստել հակախորհրդային իմպերիալիստական ինտերվենցիայի համար: Նույն այդ ծրագրի մի այլ ողակն եր քբդական շարժման կազմակերպումը և հրահրումը—մի արկածախնդրություն, վոր նույն անփառունակ բախտին արժանացավ, ինչ վոր Դաշնակցության մինչ այդ կատարած բոլոր մյուս արկածախնդրությունները,—վոր ուղղված եր Խորհրդային Միության դեմ և նպատակ ուներ նրա հարավային սահմաններին մոտ ստեղծելու հակախորհրդային նոր ռազմարեմ: Վերջին ժամանակներս դաշնակների կողմից մենցեկների և առավալաթիստների հետ՝ «կովկասի անկախության կոմիտեյում» միասնական հակատ ստեղծելու համար մզկող բանակցությունների աշխատացումն աղջանշանում ե Անդրկովկասյան Սոցիալիստական Հանրապետությունների Ֆեդերացիայի դեմ ուղղված զավագրությունների առաջիկա և ավելի աշխատացումը՝ իմպերիալիստական տերերի հրամանով: Դաշնակների աշխատյժ աշխատանքը Ռումինիայում, նրանց կողմից Ռումինիայի ներկա Փաշիստ վարչապետ, «հայասեր» Յորդային անվերջ մեծարելը և նրա մոտ կասկածելի պատգամավորություններ» ուղարկելը պատահա-

կան յերեսույթ չե: Յեվ պատահականություն չե նույնպես, վոր պարոն Խատիսովն աղմկում և այն մասին, թե ժամանակն ե ավելի ակտիվ գարձնելու «Հայկական հարցի» հրահրումը և «պաշտպանումը» մեծ» պետությունների առաջ: Մի կողմից Դաշնակցության ընթացիկ կուրսն արտահայտող այս փաստերը, մյուս կողմից Խորհրդային Հայաստանում դաշնակների անմիջական դեկտավությամբ կազմակերպվող և հրահրվող կուրակային-բանդիտական վունդգություններն անբաժան ողակներն են իմպերիալիստների կամակատար Դաշնակցության հակախորհրդային ակտիվ պայքարի ընդհանուր շղթայի: Ինչքան ել գաշնակներն իրենց հատուկ կեղծավոր լիդրությամբ շարունակեն աղաղակ բարձրացնել այն մասին, թե իբր նրանք գտնվում են «զաղափառական ուղղուցիչայի» դիրքում Խորհրդային Հայստանի նկատմամբ, նրանք այլևս չեն կարող խարել նույնիսկ ամենանախիվ մարդկանց: Դաշնակների անմիջական նպատակն ե՝ հենված կուրակության և ընդհանրապես կապիտալիստական տարրերի վրա, առանց միջոցների վորեւ խորության, —սկսած մասսարարությունից մինչև ապստամբական կուրակային յելույթների կազմակերպումը, —խանգարել սոցիալիզմի շինարարությունը և «ուժեր պատրաստել»՝ խորհրդային իշխանությունը տապալելու համար: «Սոցիալական այս պատվերը» կատարելու և լրտեսական աշխատանքի համար ե, վոր նրանք ոգտվում են իմպերիալիստների ուղանի փշրանքներից: Իմպերիալիստների թելադրանքով զինված ապստամբության կազմակերպումը խորհրդային իշխանության դեմ յեղել ե և մնում ե գաշնակների շարունակ հետապնդած գերազույն խնդիրը, և յեթե գաշնակները ճգնում են վարագութել իրենց բուն նպատակը, այդ միայն այն պատճառով, վոր նրանք գգում են իրենց անզորությունը, իրենց անկարողությունը: Մի կողմից՝ յերկում զնալով ավելի ու ավելի քայլքայգում և վոչնչանում ե գաշնակների հենարանն ու «կենդանի ուժը»—կուրակությունը, մյուս կողմից՝ բանվորապեղուղացիական ամենալայն մասսաներ սոցիալիզմի կառուցման վճռական մարտերում զինվում են դասակարգային ավելի բարձր գիտակցությամբ:

Իմպերիալիզմի աղենս և շահագործող դասակարգերի դրոշակակիր ֆաշիզմության դեմ:

Այս ամենը չեն կարող հուսահատական կատաղության չասցնել գաշնակներին: Կոլտնտեսությունների ղեղեցիկ հրկիզումից սկսած մինչև մասսարարական քայլերը՝ մեր ձեռնարկություններում և հիմնարկներում, կուրակային բանդիտական շարժման հրահրումը (վերը, իհարկե, հենց բնույթ խեղդվում և զյուղի աշխատավորական մասսաների անմիջական մասնակցությամբ)՝ դաշնակների կատաղության պոոթկման արտահայտություններն են: Այս կապակցությամբ ե նաև, վոր բուրժուանացիոնալիստական իդեոլոգիան աշխատմալու վորոշակի նշաններ ե ցույց տալիս:

Ահա թե ինչու իդեոլոգիական պայքարի բռլոր զենքերն առաջին հերթին պետք ե ուղղված լինեն Դաշնակցության դեմ: Իհարկե, մենք շատ լսով զիտենք, վոր արտասահմանի հայ աշխատավորության դասակարգային գիտակցության արագատեմպ բարձրացումը մի կողմից և կուրակության մոտալուս վերացումը յերկում մյուս կողմից՝ մահացու հարված կհաօցնեն Դաշնակցության: Սակայն այդ այլպես լինելով հանդերձ, ներկայումս, դասակարգային պայքարի սրման ներկա պայմաններում, ոպրատւնիստական խայտառակ սխալ կլիներ ամենափոքր չափով անգամ թերագնահատել Դաշնակցության՝ վորպես հականեղափոխական ֆրոնտի հեգեմոնի ու զեկավարի՝ վտանգը:

ՄԵՐԿԱՑՆԵԼ ՅԵՎ ԶԱԽԱՆԱԼԻՑՄԻ ԲՈԼՈՐ  
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այստեղ կարիք չկա մանրամասն խոսելու հականեղափոխական ֆրոնտի մյուս հատվածների մասին: Ռամկավարները, հնչակները Խորհրդային Հայաստանում գոյություն չունենալու չափ աննշան են: Արտասահմանում հընչակները զրեթե բոլորովին մարած, իսկ ուսմակարները՝ արևմտահայ բուրժուազիայի կլասակցությունը, աշխատման վրաց նշաններ են ցույց տալիս և իրենց հետեւցությանը են նույնիսկ բանվորների և աշխատավորների ղեկան յերեսության դեմ առաջին առաջական դաշնակցության դեմ:

գասակարգային գիտակցության չեկած մի փոքրոթիվ խամբ:  
Հնչակյան և ռամկավարական իդեոլոգիան, ինչպես այդ  
շեշտեց մեր կենտրոնը գեուս 1928 թվին, ըստ եյության  
նույն դաշնակիզմն ե, սակայն դրևորմում և ավելի քու-  
ղարկված և ավելի վախկոտ ձևով: Ռամկավարների «Ծնա-  
մական» դիրքը դաշնակների հանդեպ բացատրվում և լոկ  
տակտիկական նկատառություն:

Այդ տեսակետից խիստ բնորոշ և ռամկավարների վեր-  
ջին շրջանի մի դոկումենտ, վորի մեջ ասված ե. ռամկա-  
վար կուսակցությունն «իր ընթացքը չի փոխեր, վորքան  
ժամանակ վոր անոնք (դաշնակները) կշարունակեն իրենց  
յեղբայրասպան, զրպարատական և աղետաբեր քաղաքակա-  
նությունը զաղութներու մեջ և բավարար յերաշխիք չեն  
ներկայացներ առ այդ»: Այս հարցադրումն ամբողջապես  
պարզում և Խորհրդային Հայաստանի նկատմամբ ռամկա-  
վարների հանդես բերած «բարեկամական» դիրքի արժեքը:  
Ռամկավարների համար ըստ եյության նշանակություն-  
չունի դաշնակների դիրքը Խորհրդային Հայաստանի նկատ-  
մամբ, և այդ միանգամայն հասկանալի յե: Նրանց հետա-  
քըրքում և դաշնակների բռնած ընթացքը դաղութներում.  
Նրանք խուսափում են մոտենալ դաշնակներին հիմնակա-  
նում այն պատճառով, վոր վախենում են, թե դաշնակներն  
իրենց ծանր թաթը կդնեն ազգային «սուրուկի», Բարեկոր-  
ծական ընկերության հարստության վրա, վորի բանալի-  
ներին ավելի մատ են իրենք:

Կենտրոնացնելով կրակը դաշնակների դեմ, մենք վեչ  
մի դեպքում չպետք ե, սակայն, աչքաթող անենք մեզ թշնա-  
մի նացիոնալիստական մյուս ուղղությունները — ռամկա-  
վարներին, մենշևիկներին, սպեցիֆիկներին և սմենովեխա-  
կաններին, մանավանդ վոր զրանցից վոմանք ձգտում են  
հարմարվել նոր պայմաններին և մասսաների վրա ազդելու  
նպատակով դործագրում են նոր մեթոդներ (Դաշնակցու-  
թյան քաջազնունիական վարիանտը):

Մեր կուսակցական կազմակերպությունը, վորը, մա-  
սավանդ վերջերս, հսկայական քաղաքական աշխատանք  
ծառակաց Դաշնակցության, ազգայնական մյուս հոսանքների  
և կոնդրատյեվլինայի դեմ, ել ավելի սիրտի ուժեղացնի պայ-

քարը դաշնակիզմի և նացիոնալիզմի մյուս՝ այլանուն վա-  
րիանտների դեմ:

Սակայն պետք ե ընդգծել, վոր մեր թեորետիկական  
կադրերը շատ քիչ բան են արել նացիոնալիստական իդեո-  
լոգիաների դեմ մզող պայքարի տեսակետից:

Անբնական ե, բայց փաստ ե, վոր մինչև այժմ մենք  
չունենք վորեւ լուրջ աշխատանք պատմության դաշնակ-  
ական կոնցեպցիայի դեմ, հասարակական զարգացման  
անանունական կոնցեպցիային չի հակադրված պատմու-  
թյան զարգացման մեր կոնցեպցիան, վոչնչացնող քննա-  
դատության չի յենթարկված Դաշնակցության սոցիալ-  
պատմական կոնցեպցիան: Յեկ թեորետիկական պայքարի  
մարտական պահանջներից ու խնդիրներից հետ մնալու հե-  
տեւանքը չե արդյոք այն խայտառակ յերկույթը, վոր դեռ  
մինչև այժմ ել այնպիսի հոյակապ մի գործում, վորպիսին  
և Մեծ Խորհրդային Հանրապետարանը, ինիցիալների տակ  
ծածկված ինչ-վոր մարդիկ շարունակում են շփոթ ու մշուշ  
ցանել Դաշնակցության շուրջը և իրենց բացարձակ ոպոր-  
տունիստական դիրքի մեջ այնքան հեռու գնաւը վոր զառան-  
ցում են այն մասին, թե «Հայաստանի ժողովրդական մաս-  
սաները 1919 թվին, պարլամենտի ընտրության ժամանակ,  
իրենց ձայների 90 տոկոսը տվին դաշնակներին»: Այդպի-  
սով «ժողովրդական քվեարկություն» և համարվում դաշ-  
նակների մաուզերիստական-վաշիստական խժդություն-  
ների և բռնությունների պայմաններում կատարված պար-  
լամենտական «ընտրությունների» կոմեդիան: Այնու-  
հետեւ, խորհրդային ընթերցողին հրամցվում և հենց դաշ-  
նակների հորինած այնպիսի պատմական կեղծիք, այսինքն  
անհայտ հոգկածազրի պնդումը, թե «1905-07 թվի հեղափո-  
խության ընթացքում Դաշնակցությունը պայքար եր մղում  
ցարիզմի դեմ»: Զենք խոսում արդեն նույն Հանրապետա-  
րանում տեղ գտած՝ Հայաստանին վերաբերող մի շարք այլ  
հողվածների մասին, վորոնք չեն դիմանում մարքսիստա-  
կան անգամ տարրական քննադատության:

Անցնենք մի այլ հարցի. մի թե գժվար եր մինչև այժմ  
հանել արխիվներից և լույս ընծայել մի շարք մատերիալ-  
ներ այն դիրքի մասին, վոր բռնեցին ռամկավարները կամ

«Ժողովրդականները» մայիսյան ապստամբության և փեռարքարյան ավանդության որերին, լույս ընծայել՝ դիմակագերձ անելու համար նրանց կեղծավոր դեմքը Խորհրդային Հայաստանի նկատմամբ։ Ժամանակն եւ պահանջել մեր իդեոլոգիական կադրերից՝ անհապաղ շրջադարձ կատարել և լուրջ աշխատանքի ձեռնարկել՝ անմիջապես վերջ տալու թերեաթիկական աշխատանքի հետ մնալուն սոցիալիստական շինարարությունից և հեղափոխական պրակտիկայից։

### ՄԵՐ ՊԱՅՔԸՆԸՆ ՈՊՈՐՏՈՒՆԻՉՄԻ ԴԵՄ

Թշնամի գաղափարախոսությունների դեմ ուղղված պայքարի հաջողության առաջին պայմանը, սակայն, այն է, վոր ավելի և ավելի ուժեղացնենք և ներգործոն դարձնենք պայքարն ոպորտունիզմի դեմ՝ սեփական շարքերում։ Մեր հաջողությունները սոցիալիզմի շինարարության գծով, արոցկիզմի և աջ թեքման ջախջախումը կուսակցության շարքերում, վոմանց բերում են այն յեղակացության, թե պայքարն ոպորտունիզմի դեմ կորցնում ե իր սրությունը։ Սխալ, ոպորտունիստական յեղակացություն։ Թեորիապես մենք զիտենք, վոր քանի դեռ չեն վերացել դասակարգերը, քանի դեռ կա դասակարգային պայքար, թշնամական իդեուլոգիաներն այս կամ այն չափով թափանցում են բանվոր դասակարգի և նույնիսկ նրա ավանդաբո՞ւ կոմունիստական կուսակցության շարքերը։ Գործնականում մենք տեսնում ենք աջ թեքման և «ձախ» խոտորումների բազմաթիվ արտահայտություններ մեր աշխատանքի բոլոր բնագավառներում։ Անա թե ինչու իդեոլոգիական պայքարի Փրոնտում մեր ամենահիմնական անելիքը պիտի լինի՝ ավելի շեշտակի և կոնկրետ դարձնել պայքարը տվյալ շրջանի զլիսավոր վատանգ աջ ոպորտունիզմի և «ձախ» խոտորումների դեմ սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզներում, կուլտուրական շինարարության զանազան ողակներում, կադրերի պատրաստման զործում, դպրոցական շինարարության մեջ, գրականության, յերաժշտության, արվեստի բնագավառում և այլն և այլն, մերկացնելով ու հարվածելով ամենուրեք աջ և «ձախ» ոպորտունիզմի ամեն մի արտա-

հայտություն, թշնամական իդեոլոգիաների ազդեցություններն ու հետքերը։

Անհուսալի ոպորտունիստը միայն կարող է թերագնահատել անցյալ շրջանի սխալները և սայթաքումները մարտնչող մատերիալիստական քննադատության յենթարկելու արժեքն ու նշանակությունը։ Մեր ներկա պայքարի հաջողությունը պահանջում ե ամենաախտ ու վոչնչացնող քննադատության յենթարկել նացիոնալիզմի, մեզ թշնամի այլ հոսանքների ամերող իդեոլոգիական արսենալը, լիկիւդացիայի յենթարկել աջ և «ձախ» ոպորտունիզմի, նացիոնալուկրտնիզմի կանալներով արտահայտված նոր ազգեցությունները մեր անտեսական և կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում։

Այսպիսով, պայքարը ամեն տեսակի և գույնի ոպորտունիզմի դեմ՝ տվյալ շրջանի հիմնական խնդիրն ե։ Ու ալորտունիզմը, ջախջախիչ պարտություններով կուսակցության զլիսավոր գծի դեմ ուղղած իր պայքարում, այժմ հանդես և գալիս ավելի վախկոտ ձեռքով, հաճախ զիմակավորված, ծպտված, և պայքարը նրա դեմ պահանջում ե ավելի մեծ զգոնություն ու աչալլընություն։

Մեր աշխատանքի յուրաքանչյուր որն ամբացնում ե մեր դիբքերը և թուլացնում է հակառակորդի դիբքերը։ Մեր կուսակցության կազմակերպությունները պիտի շարունակեն անհաշտ պայքարը մեր պրոլետարիատին խորթ արամադրությունների դեմ թե կուսակցությունից դուրս և թե նրա շարքերում, պիտի ուժեղացնեն համատարած արշավանքը իդեոլոգիական ֆրոնտում, համախմբելով մասամբերին կուսակցության լինինյան զծի շուրջը։

ԱՆՇԵՎ ԿԻՐԱՌԵԼ ԼԵՆԻՆՑԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՅԻ ԹՅՈՒՆԲ

16-րդ համագումարում ընկ. Սաալինը տվեց սպառիչ գնահատական ազգային հարցի բնագավառում կուսակցության մեջ յեղած թեքումներին։ Այդ թեքումները դոյլություն ունեն և, վոր զլիսավորն ե, աճում են, շեշտեց ընկ. Ստալինը։ Դեպի զլիսավոր վահանգ՝ «վելիկուուսական շովինիզմը յեղած թեքման եյությունն այն ե, վոր ձգտում են

աչքաթող անել լեզվի, կուլտուրայի, կենցաղի ազգային տարրերությունները. ձգտում են հանրապետությունների և մարզերի լիկվիդացիան նախապատրաստել. ձգտում են ազգային իրավահավասարության սկզբունքը խախտել և ապարատի, մամուլի, դպրոցի ու պետական և հասարակական մյուս կազմակերպությունների նկատմամբ նսեմացնել կուսակցության քաղաքականությունը»: Սրա հակառակ՝ «տեղական նացիոնալիզմի թեքման ելությունն այն ե, վոր ձգտում են առանձնանալ և փակվել իրենց ազգային կեղեվի շրջանակներում, ձգտում են իրենց ազգի ներսում յեղած դասակարգային հակասությունները քողարկել. ձրգտում են վելիկոուսական շովինիզմից ազատվել՝ սոցիալատական շինարարության ընդհանուր հորձանքից հեռանալով. ձգտում են չտեսնել այն, ինչը ԽՍՀՄ ազգությունների աշխատավոր մասսաներին մոտեցնում ե ու միացնում, և տեսնել միայն այն, ինչը կարող ե նրանց հեռացնել իրարից» (Սաալին):

Կուսակցության 16-րդ համագումարն ընդգծեց, վոր տվյալ հտապում գլխավոր վտանգը մեծապետական թեքումն ե, վոր փորձում եր ուելիզմայի յենթարկել լենինյան ազգային քաղաքականության հիմքերը և ինտերնացիոնալիզմի գրոշի տակ քողարկում ե առաջներում գերիշխող վելիկոուսակարգի ձգությունները՝ վերադարձնելու իր կորցրած առանձնաշնորհումները:

Ահա մեր կուսակցության ազգային քաղաքականության հիմնական յելակետները:

### Ա.Վ.ԵԼԻ Ա.ՄՐԱՅՆԵԼ, Ա.ՆԳՐԿՈՎԱԿԱ.ՍՅԵՍ.Ն ՖԵԴԵՐԱ.ՑԻՒ.Ն

Հայտնի յե, վոր անցյալ տարի կարճ ժամանակ մեզ մոտ կատարվեց այն սխալը, թե Հայաստանում, նկատի ունենալով մի շարք առանձնահատկություններ (հայ բնակչության գերիշխող մեծամասնություն կազմելը, պիտական ապարատի տեղականացումը և այլն), չի կարելի վելիկոուսական թեքումը համարել գլխավոր վտանգ: Այդ տեսակետի հիմնական մեթոդոգիական սխալն այն եր, վոր Հայաստանը գերցնում ելին առանձին, Խորհրդային Միության մեջ կատարվող սոցիալ-քաղաքական և առաջնական ընդհանուր

պրոցեսներից կտրված: Անցյալ տարվա աշնանը հրավիրված իդեոլոգիական խորհրդակցության ընթացքում մենք վճռականորեն ուղղեցինք կատարված սխալը և վերացրինք ազգային քաղաքականության ասպարեզում յեղած թեքումների վերաբերյալ շփոթ ձևակերպումները: Յեվ այնուհետև մեր պայքարը հանուն կուսակցության ազգային քաղաքականության ընթանում ե յերկու ֆրոնտի վրա՝ ընդդեմ զլիսավոր վտանգ մեծապետական թեքման և տեղական նացիոնալ-ռուկրանիզմի: Սակայն չենք կարող ընդունել, վոր գեուս զգալի թերություններ ունենք, այս առարկություններից մեր պատճենը կազմակերպման միջոցով: Մեր աշխատանքի և պայքարի ամբողջ փորձը փայլուն կերպով ապացուցեց Անդրկովկասի աշխատավոր ժողովուրդների համերաշխության և սոցիալիստական գործակցության այդ ձևի ճշտությունը Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերացիան այն ամրակուռ ամրոցն ե, վորին զարկվելով՝ փշրվում են դաշնակշմուսավաթ-մենշենիկ յերրորդության բոլոր փորձերը՝ վերականգնել իրենց արյունոտ իշխանությունը: Անդրկովկասյան Ֆեդերացիան իր տնտեսական զարգացման և վերակառուցման միասնական պլանով ամենառաջնական կատարման մեջ մասնակի առաջնական հանրապետությունների տնտեսական վերելքն ապահովելու գործում:

Անդրկովմի հետագա աշխատանքների մասին ընդունված իր հայտնի վորոշման մեջ Համկոմկուսի Կենտկոմը 1928 թվի նոյեմբերին անհրաժեշտ գտավ ամրացնել Անդրկովկայի տնտեսական բազան, ապահովել նրա գործական դեկավարությունն ամրող Անդրկովկասի տնտեսական շինարարության նկատմամբ, ամրացնել Անդրկովկասի ԺՏԿԸ, տալով նրան ոպերատիվ փունկցիաներ արդյունաբերության կարևորագույն ճյուղերի և հանրապետական ԺՏԿ-երի նկատմամբ, և այլն: Սակայն, դնելով Անդրկովկասյան Ֆեդերացիայի տնտեսական հիմքերի ամրացման կարևորագույն խնդիրը, Կենտկոմը միաժամանակ շեշտեց,

վոր «Անդրֆեղերացիայի ղեկավար դերի ուժեղացումն ազգային հանրապետությունների նկատմամբ պիտի միա-աժամանակ ընթացակցի ազգային հանրապետությունների ինքնազրծունեյությանը և անտեսական նախաձեռնության ծավալմանը»:

Անցած յերկու տարվա ընթացքում մեր կուսակցությունը յերկու փրոնտի վրա վճռական և անողոք պայքար մղելով նացիոնալ-ռուկիւնիզմի դեմ, արդեն խաղաղ ե բերել խոշոր նվաճումներ կուսակցության այդ դիրեկտիվների կենսագործման ուղղությամբ:

Սակայն, կենտկումում այս նշանավոր վորոշման կիրառման հանրապետում կատարելով, չենք կարող չնշել վոր գործնականում վորոշ գծերով կատարվեցին մի շարք խոտորումներ և չափազանցություններ, վորոնք չեյին համապատասխանում Համել(բ)կ կենտկոմի դիրեկտիվների վագուն՝ ազգային հանրապետությունների դերի ու նշանակության հարցում: Անդրյերկոմի վերջին մի շարք վորոշումները գալիս են շտկելու այդ ուղղությամբ կատարված առանձին սխալները: Տնտեսական նախաձեռնության, ինքնազրծունեյության և կաղըերի պատրաստման գծով լայնացվում են ազգային հանրապետությունների հնարավորությունները:

Անհրաժեշտ ե ուժեղացնել ուշադրությունը դեպի լենինյան ազգային քաղաքականության հարցերը՝ նրա անշեղ կիրառումն ազահովելու համար: Անդրյերկոմի վերջին վորոշումների կիրառման ընթացքում ևս հանդես կդա թե մեծապետական թեքումը և թե տեղական նացիոնալ-ռուկունիզմը: Առաջինի կրողները, առիթ ծառայեցնելով ֆեղերատիվ մի շարք յերկրորդական տնտեսական որդանների վերացումը, կիրածեն սպեկուլյացիա անել՝ ասելով, թե Ֆեղերացիայի դերը նսեմացվում ե. յերկրորդի կրողները կփորձեն ոգտագործել հանրապետական տնտեսական որդանների փունկցիաների լայնացումը՝ խսկապես նսեմացնելու: համար Անդրֆեղերացիայի դերն ու նշանակությունը: Ինչ խոսք, վոր կուսակցության ազգային քաղաքականության անշեղ կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ ե ուժեղացնել պայքարը նժան տենդենցների դեմ, կենտրոնացնելով

կրակը դիմավոր վտանգ մեծապետական թեքման դեմ և միաժամանակ տեղնուտեղը ջախջախիչ հարգածներ հասցնելով տեղական նացիոնալ-ռուկոնիզմին, վորը զողվելով դասակարգային թշնամու հետ, «ջուր և ավելացնում ինտերվենցիոնիստների ջրադացին»:

ԼՈՒՐՉ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԶԵՎՈՎ Ա.ԶԳԱՅԻՆ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿՈԽԱՑՈՒԹՅԱՆ ԶՈՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԱՑՄԱՆ ՀԱՐՑԱՑՄԱՆ

Անհրաժեշտ ե կրկնապատկել ուշադրությունը դեպի ազգային կուլտուրայի հարցերը և նըանց մշակումը: Վերցնենք լեզվի հարցը: Միթե մեծապետական թեքման տուրք տալ չե այն հանգամանքը, վոր տարիների ընթացքում ուշադրությունից վրիպել ե մեր պետական ապարատի վորոշողակներում հայերենը գործածական հիմնական լեզու դարձնելու հարցը: Միթե փաստ չե, վոր մեր պետական բազմաթիվ հիմնարկներում, կոմիսարիատներում, խորհրդակցություններում մեծ մասամբ ոռուերեն են խոսում: Մեր դեկալիա ընկերների մի զգալի մասը նույնիսկ շրջաններում, ուր ոռուերեն հասկացողները բացառություն են կազմում, ոռուերեն են խոսում: Ի՞նչպես վորակել այն փաստը, վոր Հայաստանի ինժեներ-տեխնիկների վերջին համագումարում բազմաթիվ ոռուերեն պլակատների շարքին չկարգում մի հատ հայատառ լուզունգ: Հայերենի թերազնահաւատությունը արտահայտվում է նաև նրանով, վոր մեր ընկերներից շատերը չեն հետեւում հայատառ մամուլին, գրականությանը, կարգում են ձեռվ ազգային, բովանդակությամբ ինտերնացիոնալ կուլտուրայից: Անհրաժեշտ ե ուժեղացնել պայքարն այս յերեսութների դեմ: հայերենը պետք ե դառնա մեր բոլոր պետական ու հասարակական որդանների գործածական լեզուն՝ առանց բացառության: կուսակցական ընկերներն իրենք պետք ե զբաղվեն մասսաներին հասկանալի լեզուն մշակելու և ճոխացնելու հարցով: Այս հարցադրումը չի նշանակում, թե չոլիտի պայքարել նաև նըանց դեմ, վորոնք ընկնում են հակառակ ծայրահեղության դիրկը, նպատակ զնելով՝ նույնիսկ արհեստական ու այշանդակ, մասսանիրին անհասկանալի բառեր թիւելով՝ վահնել մեր լեզվից վաղուց քաղաքացիական իրավունք ստա-

շած ոտար բառերն ու տերմինները կամ նշանակություն չեն տալիս Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխության լեզուն—ուսւերենը տարածելու գործին, մանավանդ յերիւտասարդության մեջ։ Տեղական նացիոնալիզմի այդ տեհնդենցիներն իրականում վոչ մի կազ չունեն մեր կուսակցության ազգային քաղաքականության հետ և պետք է տեղնուտեղը մերկացվեն ու ջախջախիչ հարված ստանան կուսակցական կազմակերպությունների կողմից։

Վերցնենք կուլտուրական ժառանգությունը քննադատորեն մշակելու հարցը։ Այս աշխատանքների թերագնահատումը մեր թեորետիկական կազմերի կողմից միթե նույնապես նշան չի մեծապետական թեքման ազգեցության մեր պարքերում։ Լենինը ժամանակին ընդգծել է, վոր «կա յերկու ազգ յուրաքանչյուր ժամանակակից ազգում — կասենք բոլոր նացիոնալ-սոցիալիստին։ Կա յերկու ազգային կուլտուրա յուրաքանչյուր ազգային կուլտուրայում։ Կա Պուշչիկովիչիների, Գուչկովսկերի և Ստրուվիների վելիկուուսական կուլտուրա, — բայց կա նաև վելիկուուսական կուլտուրա, վոր բնորոշվում ե Զերնիշեվսկու և Պետսանովի տուրա, վոր բնորոշվում ե Չերնիշևսկու և Պետսանովի անուներով։ Կա նույնպիսի յերկու կուլտուրա ուկանականության մեջ, ինչպես նաև Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, հրեաների մոտ և այլն։ իսկ մեզ մժտ, հայ իրականության մեջ։ Միթե չկան լենինի մատնանշած յերկու կուլտուրաներից «գեմովրատական» կուլտուրայի արտահայտությունները մեր գրականության, հասարակական շարժման պատմության մեջ։ Զբաղվել են արդյոք այս խնդրով մեր թեորետիկական կադրերը։ Գրեթե բոլորին վոչ, մինչդեռ հենց այս աշխատանքը հսկայական նշանակություն ունի մեր իդեոլոգիական դիրքերի ամրացման, թշնամական իդեոլոգիական մշուշը փարատելու գործում։

Մենք չունենք մինչև այժմ մարքուլենինյան պատմագրական կոնցեպցիայով հայոց պատմության ձեռնարկի վորեւե փորձ։ Չունենք հայոց գրականության մարքսիստական պատմությունը։ Խորհրդային իշխանության 11 տարին Հայաստանում շոշափելի վոչինչ չտվեց այս ուղղությամբ։ Միթե կարելի յե հանդուրժել այլիս մեր թեորետիկների

նման գանգաղաշարժությունն ու ամլությունը։ Ժամանակը չե կորականապես պահանջել մեր թեորետիկական ուժերից՝ բավարարել հայոց պատմության, գրականության դասագրերի, ձեռնարկների, մոնոգրաֆիաների սուր պահանջը, այդպիսով իսկ փակելով մեր հաշիվը կուլտուրայի բնագավառում բուրժուական-նացիոնալիստական առասպեկների հետ։

Թեորիայի ասպարեզում անհրաժեշտ շրջադարձը կատարելու համար անհրաժեշտ ե ձեռնարկել Խորհրդային Հայաստանի գիտական աշխատանքների արմատական վերակառուցմանը։ Հայաստանի Գիտությունների ինստիտուտը 1932 թվի սկզբից վերակառուցվելու յե վորպես մարքսիզմինինիմի ինստիտուտ, մանելով այդպիսով Համամիութենական Կոմունիստական Ակադեմիայի սիստեմի մեջ։ Սա չի նշանակում, թե մենք վանելու յենք գիտական աշխատանքների ասպարեզից անկուսակցական գիտական ուժերին։ ընդհակառակը, մեր նպատակն ե լայնորեն ներգրավել այն բոլոր գիտական ուժերին, վորոնք մոտենում են մարքսինինյան մեթոդոլոգիային, կամենում են վերափոխվել՝ դեն շպրտելով իդեալիստական-սփոլաստիկական հակագիտական թեորիաները և մեթոդոլոգիան։ Ենթարկորդ կարևոր ձեռնարկումը, վոր սկսում ենք, դա Հայաստանում կոմունիստական համալսարան կազմակերպելու աշխատանքներն են։ Այդ աշխատանքներին զուգընթաց զարկ տալով ասպիրանտուրայի միջոցով գիտական նոր, յերիտասարդ կադրեր ստեղծելու գործին՝ պետք ե ամրացնել իդեոլոգիական պայքարի մեր մարտական դիրքերը։

Ընկերներ, չենք կարող չարձանագրել նմանապես այն բացասական յերեւութը, վոր մեր իդեոլոգիական կազմերը շատ ուշ և ընդհանուր ձևով են արձագանքում այն պայքարին, վոր մղում ե կոմունիստական գիտությունը Մասկվայում և Միության այլ առաջավոր կենտրոններում բուրժուական ազգեցությունների և արտահայտությունների գետ գիտության բնագավառում (ուռիխականություն, գերորիխականություն, մեխանիզմ և այլն)։ այդ պայքարն այստեղ վերաբազրվում ե լավագույն զետքում ընդհանուր ձևով, առանց լցվելու պայքարի տեղական նյութերի կոն-

կրետ բովանդակությամբ։ Զկտրվելով յերբեք համամիութեանական կոմունիստական գիտության առաջընթացից և ընդհանուր խնդիրներից, իդեոլոգիական ֆրոնտի մեր աշխատողները, սակայն, պիտի կարողանան կապել այդ ընդհանուր խնդիրները մեր տեղական առանձնահատկությունների, կոնկրետ իրականության և պահանջների հետ։

Յերկու խոսք ել մեր հրատարակչական գործի և պարբերականների մասին։ Այստեղ, ներկա դրությունը միանգամայն անբավարար է։ Դեռ չենք կարողացել տեղից շարժել այնպիսի մի գործ, վորապիսին և Մարքսի և Ենդելսի աշխատությունների հրատարակումը և մասսայականացումը։ Ենթանի հայերեն հրատարակության գործը նույնպես դանդաղ և առաջ գնում։ Պարբերական ժուրնալների հրատարակությունը գտնվում է նույն անկանոն վիճակում, ինչ վոր առաջ եր։ Մեր պարբերականները շատ հետ են մնում այսորվա խնդիրներից ու պահանջներից, չեն կազմակերպում լայն աշխատանք, մինչեռ հենց կուլտուրայի բնագավառում նացիոնալ-դեմոկրատական նախապաշտումները ջախջախելու, ձեռվ աղջային, բովանդակությամբ պլութարական կուլտուրայի հարցերը մշակելու խնդրում դրանք հըսկական բեկում նաև այս բնագավառում։

### ԹԵՌԻՑՆ ՀԵՏ ԶՊԻՏԻ ՄՆՍ. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ.ՑԻՑ

Ընկերներ, յես այստեղ ավելորդ եմ համարում հանգամանուրեն կանգ առնել կուսակցական դաստիարակության հերթական խնդիրների վրա։ Այդ խնդիրների նշանակությունը մանրամասն պարզաբանված ե ընկ։ Պոստիշեկի հայտնի ճառում։ Հիմնականն այստեղ այն ե, վորպեսդի կուսկազմակերպությունն անմիջապես արմատախիլ անի կուսուսուցման, թեորիայի թերագնահատման ամեն մի փորձ մեր շարքերում։ Մեղ մոտ վատ սովորություն և դարձել ամեն տեղ և ամեն առթիվ ճառել և խոսել թեորիայի, կուսուսուցման նշանակության մասին՝ գործնականում այդ ուղղությամբ վոչինչ չանելով հանդերձ։ Մինչդեռ պարզ պիտի լինի յուրաքանչյուր կուսակցականի։

Համար, վոր առանց թեորետիկական մակարդակի բարձրացման անհնար և ըմբռնել և հասկանալ ներկա ետապի բարդ առանձնահատկություններն ու գլխավորել մասսաների պայքարը սոցիալիզմի համար։ Բանվոր դասակարգի նոր կադրերի, կուսակցական կազմակերպության հազարավոր նոր անդամների կուսուսուցման և դաստիարակության գործը պիտի դնել առաջին պլանի վրա։ Մանավանդ կուսակտիվի ուսուցման և նրա թեորետիկական մակարդակի բարձրացման գործը։ Կուսակտիվը չգետք ե մոռանա, վոր «թեորիայից ձեռք քաշելը հակասում է լենինիզմի վոգուն և հոդի յե մեծամեծ վատանգներով» (Սաալին)։ Մեր ներկա խորհրդակցությունը պիտի մշակի կոնկրետ միջոցներ, խուսափելով անցյալ տարվա սխալներից և կուսուսուցման գործի անբավարար ընթացքից՝ կուսուսուցման ցանցում ընդդրկելու համար կուսակցական և կոմյերիտական վողջ կազմակերպությունը և անկուսակցական լայն մասսաները։ Կուսուսուցման աշխատանքների բայցնիկյան կազմակերպումը հիմնական յելակետներից մեկը պիտի լինի մեր իդեոլոգիական պայքարն աշխատացնելու և նոր աստիճանի բարձրացնելու համար։

Մեր հեղափոխության ներկա ետապը հրամայական պահանջ և գնում ուժեղացնել պայքարն իդեոլոգիական ֆրոնտում բոլոր գծերով, ավելի ծավալուն, ավելի անողոք պայքար մղել դաշնակիզմի դեմ, բոլոր տեսակի թշնամական իդեոլոգիաների սողոսկումների դեմ, — անհաշտ պայքար կուսակցության շարքերում աջ և «ձախ» ոպորտունիստական թեքումների դեմ։ Ավելի անշեղ կիրառել լենինյան ազգային քաղաքականությունը։ Վճռական շրջադարձ կատարել թեորետիկական պայքարի ֆրոնտում։ Թեորետիկական աշխատանքն այլևս չպետք է հետ մնա սոցիալիստական շինարարության մարտական խնդիրներից ու պահանջներից, հեղափոխական պրակտիկայից։ Բայցնիկորեն պետք ե ծավալել համատարած արշավ իդեոլոգիական ֆրոնտի բոլոր ճակատամասերում։

ԿՈՄԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՍՆՈՐՅԱԿԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻՆ  
1932 ԹՎԻ ՄԱՅԻՍԻ 15-ԻՆ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԸ

Ընկերներ, այսոր մենք սկսում ենք Համամիութենական Կոմունիստական Ակադեմիայի առաջին տասնորյակը Հայաստանում: Ավելորդ են յերկար բացատրությունները՝ ըմբռնելու համար վոչ միայն գիտական, այլև հասարակական-քաղաքական այն խոշոր նշանակությունը, վոր ունի Կոմունիստական Ակադեմիայի այս առաջին բրիգադի գաղուստը Խորհրդային Հայաստան և նրա անմիջական շփումը մեր կուսակցության ակտիվի և գիտական-իդեոլոգիական ֆրոնտի աշխատողների հետ: Կոմակադեմիայի տասնորյակի կազմակերպումն ամենից առաջ նշան և մեր գիտական ֆրոնտի աշխատացման և իդեոլոգիական ֆրոնտում մեր գիրքերի ամրացման: Նա զալիս ե ասելու, մյուս կողմից, վոր Խորհրդային Հայաստանի գիտական-իդեոլոգիական ֆրոնտի և գիտության համամիութենական կենտրոնի միջև անմիջական կապ և համագործակցություն ստեղծելը դարձել ե այժմեյական և հասունացած մի խնդիր:

Պատահական յերկույթ չե, ընկերներ, վոր Կոմունիստական Ակադեմիայի տասնորյակն Անդրկովկասում տեղի յե ունենում հատկապես ներկայումս, յերբ Խորհրդային Միության մեջ հաղթանակով ավարտվելու վրա յե սոցիալիստական առաջին ննդամյակը, յերբ սոցիալիստական անտեսության արդեն ավարտված հիմքերի վրա սկսում են բարձրանալ նոր հասարակակարգի առաջին հարկերը, յերբ Խորհրդային Միությունը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ արագացնում ե իր յերկաթյա յերթը ղեպի յերրկորդ հնդամյակը՝ անդասակարգ սոցիալիստական հասարակակարգի կառուցումն ավարտելու հնդամյակը: Պրո-

շետարական հեղափոխության և սոցիալիզմի շինարարության նոր ետապում առաջարկվում են նորանոր հարցեր և բարդ խնդիրներ, վորոնց պատասխանը պետք է մշակի մարքս-լենինյան գիտությունը: Այս կապակցությամբ գիտության, տեսության դերն ավելի և ավելի բարձրանում է պատասխանատու յե դառնում: Առանց մարքս-լենինյան մեթոդուղիքայով առաջնորդվող հեղափոխական գիտության ամենալայն ծավալման՝ անհնար և կհնագործել սոցիալիստական յերկրորդ հնդամյակի կարևորագույն խնդիրը՝ մեր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի արմատական տեխնիկական վերակառուցումը: Առանց մարքս-լենինյան գիտության լայն ծավալման՝ անհնար և մեր յերկրի գիտական ուսումնասիրությունը, նրա անսահման հնարավորությունների հայտաբերումը և ոգտագործումը: Վերջապես առանց մարքս-լենինյան գիտության լայն ծավալման՝ անհնար և ըմբռնել սոցիալ-տնտեսական այն տեղաշարժերը, վորոնք կատարվում են Խորհրդային Միության մեջ, անհնար և շշափել և լուսավորել մեր պայքարի ու առաջնադաշտացման ուղիները՝ հայտաբերելով և տեղնուտեղը ջախ-ջախելով մարքսիզմ-լենինիզմի թշնամի բոլոր գաղափարախոսությունները և «տեսությունները»:

Կոմունիստական կուսակցությունը, ընկերներ, մարդկության պատմության առաջամարտիկն ե, նրա առաջմղիչ ուժը: Նա միշտ ել խորապես գիտակցել ե և ընդգծել տեսության և գիտության հսկայական, հեղափոխական նշանակությունը: Պատահական չե, վոր մարդկության նոր պատմության մեծագույն գիտնականները՝ համաշխարհային կոմունիզմի հիմնադիրներն են — Մարքսն ու Էնգելսը: Պատահական չե, վոր նորագույն գիտության ամենաբարձր կատարներին հասան մեր կուսակցության հիմնադիրն ու մեծ առաջնորդը՝ Լենինը և նրա մեծ աշակերտն ու գործակիցը՝ համաշխարհային պրոլետարական հեղափոխության առաջնորդ ընկ. Ստալինը: Մեր կուսակցությունն ե միայն, վոր վորպես միակ հետևողական-հեղափոխական կուսակցություն, չի վախենում առաջավոր գիտության ամենախիզախ յեղակացություններից: Այդ իսկ պատճառով, միայն խորհրդային իշխանությունն ե, վոր ստեղծում ե առաջավոր

գիտության անարգել զարգացման և բուռն աճման բոլոր պայմանները։ Սակայն գիտությունը, տեսությունը մեղ համար կյանքից կարված սրբապատկերներ չեն յեղել յերբեք. մարդստենինյան գիտությունն անխղելի կապերով կապված և մեր հեղափոխական պրակտիկայի հետ։ «Թեորիան, — շեշտում ե մեր կուսակցության առաջնորդը, — իհարկե, առարկայագործք ե դառնում, յեթե նա չի կապվում հեղափոխական պրակտիկայի հետ, ճիշտ այնպես, ինչպես պրակտիկան կույր ե դառնում, յեթե նա չի լուսավորում իր ճանապարհը հեղափոխական թեորիայով։ Սակայն թեորիան կարող ե բանվորական շարժման մեծագույն ուժը դառնալ, յեթե նա զարգանում ե անքակտելիորեն կապված հեղափոխական պրակտիկայի հետ, վորովհետեւ նա, և միայն նա, կարող ե վատահություն ներշնչել շարժմանը, տալ կողմնորոշման ուժ և շրջապատող դեպքերի ներքին կապի ըմբռնողություն, վորովհետեւ նա, և միայն նա, կարող ե ոգնել պրակտիկային հասկանալու վոչ միայն այն, թե ինչպես և ուր են շարժվում դասակարգերը ներկայումս, այլև այն, թե ինչպես և ուր պետք ե շարժվեն նրանք մոտ ապագայում։ Վոչ այլ վոք, յեթե վոչ լենինն եր, վորտասնյակ անզամ ասում և կրկնում եր իր հայտնի դրույթն այն մասին, թե՝

«Առանց հեղափոխական թեորիայի չի կարող լինել նաև հեղափոխական շարժում» (տես հ. IV, էջ 380):

Այսպես ե դնում հեղափոխական մարդսիզմ-լենինիզմը, այսպես ե դնում մեր կուսակցությունը տեսության և պրակտիկայի փոխհարաբերության և փոխազդեցության հարցը։ Սակայն մենք գիտենք այն գնահատականը, վոր ավել եր մեր կուսակցությունը տեսական ֆրոնտի դրությանը յերկու և կես տարի սրանից առաջ։ 1929 թ. դեկտ. 27-ին մարդսիստ-ազգարարագետների համագումարում ընկ. Ստալինը շեշտեց, վոր տեսական միտքը հետ և մոռւմ մեր պրակտիկ հաջողություններից, վոր մեզանում վորոշ խզում ե նկատվում պրակտիկ հաջողությունների և տեսական մտքի զարգացման միջն։ «Մինչդեռ անհարժեշտ ե, վոր տեսական աշխատանքը վոչ միայն համար գործնական աշխատանքի հետից, այլև նրանից առաջ անցնի, դիմում կամ կուսակցությունի մեջ»։

աշխատողներին այն պայքարում, վոր մղում են նրանք սոցիալիզմի համար» (Ստալին)։ Ընկ. Ստալինի այս հարցադրումից հետո անցել ե արգեն յերկու և կես տարի. այդ ժամանակաշրջանը Խորհրդային Միության մեջ գիտական փրոնտի արմատական վերակառուցման շրջանը յեղավ։

Կոմակաղեմիան գիտական այն կենտրոնն ե, վոր չամելը միուսի կամ կենսական կենտրոնն աշխատանք ամպաւմ գիտական ֆրոնտի վերակառուցման աշխատանքները, վերջին շրջանում գիտության և իդեոլոգիական ֆրոնտում հայտաբերվեցին և ջախջախիչ հարված ստացան մարդսիզմ-լենինիզմին թշնամի թեորիաները։ Դիմակագերծ և ջարգութշուր ե արված ռուբինականությունը քաղաքանատեսություն մեջ, ջախջախիչ մեխանիսմաները, մենշևիկող իդեալիզմը, լենինիզմին թշնամի տեսությունները գրականագիտության մեջ, ազգարային ֆրոնտում և այլն։ Ընկ. Ստալինի վերջին հայտնի նամակը մի հզոր խթան յեղավ՝ բարձրացնելու կուսակցության զգաստությունը դասականացնելու և նրա ամեն գույնի ազենտների բացահայտ կամ կոնտրարանդիսական վոտնագությունների դեմ իդեոլոգիական ֆրոնտում։ Այսպիսով, կարելի յի ասել վոր վերջին շրջանում վորոշ գրական աշխատանք կատարվել ե վերացնելու համար տեսական մտքի այն հետ մընալը, վորի մասին աղղանցում եր ընկ. Ստալինը յերկու և կես տարի առաջ։ Ահա այդ աշխատանքների, գիտական ֆրոնտի վերակառուցման արդյունքների մասին և ամենից առաջ, վոր մեզ զեկուցելու յեն Կոմակաղեմիայի ներկայացուցիչները՝ նրանց փորձով և որինակով, նրանց անմիջական աշակցությամբ աշխատանքաները Խորհրդային Հայաստանում։

Իսկ ի՞նչ դրության մեջ և մեզ մոտ գիտական-տեսական աշխատանքների ֆրոնտը։ Ավելորդ են համեմատությունները ներկայի և համեմատարար մոտիկ անցյալի միջն։ Խորհրդային Հայաստանի ներկա տերիտորիայի վրա, նախկին Յերևանյան նահանգում, ցարական ինքնակալության այդ ամենահետամնաց, թմրած ու ճահճային գաղութեներից մեկում, նախքան հեղափոխությունն ավելորդ և գիտության կամ գիտական աշխատանքի վորեւ նշույլ վորոնել։ Ավելին։

Վոչ միայն գիտական աշխատանքները բուն իմաստով, այլև կուլտուրական աշխատանքներն ավելի լայն առումով գտնվում եյին գրեթե գոյություն չունենալու թշվառ վիճակում: Ժողովրդական մասսաների գրեթե համատարած անդրագիտություն, ամբողջ նահանգում միքանի ծխական, մի թեմական դպրոց և 1—2 գիմնազիա, կղերական խավարամիտ մի ժուրնալ՝ հայ բուրժուազիայի յեկեղեցական կենտրոնում: Բուրժուական և ծխական հեղձուցիչ ու թունավորող մթնոլորտ ամենուրեք: Դաշնակցությունը չեր, վոր իր անփառունակ տիրապետության շրջանում պետք ե ժամանել ժողովրդի կուլտուրական գրության մասին: Նրա տիրապետության ժամանակ մինչ այդ յեղած միքանի միջնակարգ դպրոցներն ու այլ հիմնարկություններն ել վերջնական անկման և փակման դատապարտվեցին: Դաշնակները շատ լավ հասկանում եյին, վոր ժողովրդական մասսաների մեջ գրագիտություն, կուլտուրական աշխատանք ծավալելով չեր, վոր նրանք պիտի կարողանային ամրացնել հայ բուրժուազիայի կառուցվող պետականության սյուները: Ընդհակառակը, նրանց միակ նպատակն եր զարկ տալ կղերական-հետազիմական, նացիոնալիստական-շովինիստական ամենասեամիտ տրամադրություններին և «տեսություններին»՝ նրանց միջոցով մթագնելու համար աշխատավորների դասակարգային գիտակցությունը: Միայն Հոկտեմբերյան հեղափոխության ծնունդ—Նոյմերերյան հեղափոխություններ, վոր բերեց Խորհրդային Հայաստանի աշխատավոր ժողովրդի ազգային և դասակարգային ազատագրում, այդպիսով իսկ ստեղծելով կուլտուրական շինարարության ծաղկման ու աճման բոլոր նախապայմանները: 12 տարի յե անցնում միայն մեր հեղափոխության հաղթանակից հետո, բայց ինչքան գործ է կատարված, ինչ հոյակապ աշխատանք և ծավալվել լենինյան ազգային քաղաքականության կիրառման նշանաբանով՝ կառուցելու համար աշխատավորական մասսաների ձևով ազգային, բովանդակությամբ պրոլետական-ինտերնացիոնալիստական կուլտուրա: 12 տարի առաջ անգրագետ մեր յերկիրը ներկայում գտնվում է համատարած գրագիտության յերկիր դառնալու նախորյակին: ամբողջ յերկրում իրականում մենք կիրառում ենք պարտադիր

ընդհանուր ուսումը. Պետական Հրատարակչությունը տարեցտարի ավելացնում է իր արտադրանքը՝ հրատարակելով հաղարավոր գրքեր. 12 տարի առաջ վնչ մի թատրոն չունեցած այս յերկրում ունենք արդեն տասնյակ թատրոններ, սեփական կինո-արտադրություն, ուսումնական 9 հիմնարկը միքանի տասնյակ տեխնիկումներ, ծավալվող խորհրդային գրականություն, յերաժշտություն, բազմաթիվ թանգարաններ, գիտական-հետազոտական 9 ինստիտուտ, բազմաթիվ գիտական ընկերություններ, 450 գիտական բարձր գորակի աշխատադիր և այլն:

Անցնելով զուտ գիտական աշխատանքներին, պիտի արձանագրենք այս ասպարեզում անցյալ տարվա վերակառուցումից և Մարքսիզմ-լենինիզմի Ինստիտուտը հիմնելուց հետո վորոշ աշխատավորում և դրական աշխատանքի միքանի նախնական քայլեր: Անցյալ տարիի, յերբ կազմակերպում եյինք Ինստիտուտը, դաշնակ թերթուկներն արտասահմանում բարձրացրին սովորական վայնասուն գիտության և գիտնականների «հալածանքի» մասին Հայաստանում: Մենք անտարբեր անցանք դասակարգային թշնամու այդ հաջոցների մոտով, մենք չենք թագցրել և չենք թագցնում, վոր նպատակ ունենք քարը քարի վրա չթողնելու նացիոնալիստական, կղերական, բուրժուական և տիրացուական «գիտությունից»: (Բուռն ծափական թյուններ)՝ Մենք կողմանից ենք առաջավոր, իսկական, մարքս-լենինյան գիտության: Յեկ պարծանքով կարող ենք ասել, վոր մեր գիտությունն իր կողմն ե գրավում արդեն անկուսակցական մեր լավագույն գիտնականների, գիտական ուժերի մեծամասնությանը: Նրանք ձգում են ուսենալ, ուսումնասիրել, փորձում են կիրառել իրենց աշխատանքներում ամենասառաջավոր, ըստ եյության միակ գիտական մեթոդը՝ գիտելիտիկական մատերիալիստական մեթոդը: Մարքսիզմ-լենինիզմի Ինստիտուտը ավելի ակտիվ ոժանդակություն պետք է ցույց տա զեպի մեզ ձգտող անկուսակցական գիտական ուժերին՝ մարքսիզմ-լենինիզմը և նրա մեթոդովիկան ուսումնասիրելու, յուրացնելու և գիտական աշխատանքներում կիրառելու ուղղությամբ:

Ընկերներ, յես մանրամասն չեմ խոսի Մաքսիզմ-ի և  
 Նինիզմի Ինստիտուտի կատարած աշխատանքների մասին.  
 այդ մասին կպատմեն ձեզ Ինստիտուտի վարչությունը: Կու-  
 ղեյի միայն շեշտել նրա աշխատանքներն ավելի աշխա-  
 ժացնելու և ծավալելու անհրաժեշտությունն ու պահանջը.  
 մեր աշխատանքների ներկա ետապում կարևորագույն նշա-  
 նակություն ունեն ամենից առաջ ինստիտուտի տնտեսա-  
 գիտական և տեխնիկայի սեկցիաների աշխատանքները,  
 վորոնք դժբախտաբար ամենից ավելի կաղում են ներկա-  
 յումս իրենց աշխատանքներում: Այդ սեկցիաներն են, վոր  
 կազմակերպելով մեր յերկրի բնական հարստությունների  
 զիտական հետազոտման գործը, մշակելով սոցիալիզմի քա-  
 ղաքատնտեսության նոր հարցերը, պիտի ոգնեն մեր պրակ-  
 տիկ որդաններին՝ կազմելու յերկրորդ սոցիալիստական  
 հագումյալը: Ինստիտուտն իր աշխատանքներով պետք է  
 ընդգրկի վոչ միայն զիտական աշխատողներին, կուսակցա-  
 կան ակտիվիտեն, այլև բանվորական լայն մասսաներին, կազ-  
 մակերպելով յերկրի ուսումնական հիմքի վածքանա-  
 գանազան ընկերություններ, քջիջներ և այլն: Զափաղանց կա-  
 րելոր և նաև Մաքսիզմ-ինիզմի Ինստիտուտին կից  
 վերջերս կազմված՝ Հայաստանի նյութական կուլտուրայի  
 ինստիտուտի նշանակությունը. այդ ինստիտուտը պետք է  
 ծավալի լայն աշխատանք Հայաստանի պատմության մարքու-  
 թնինյան բազմակողմանի ուսումնական համար՝ նյու-  
 թական կուլտուրայի մնացորդների հիման վրա: Ինստիտու-  
 տի մյուս սեկցիաները, փիլիսոփայական, գրականագիտա-  
 կան, բնական զիտությունների և այլն, պետք և ավելի  
 լայն ծավալեն իրենց աշխատանքները՝ անհաշտ պայքար  
 մղելով լենինիզմին խորթ ու թշնամի զաղափարախոսու-  
 թյունների ամեն մի արտահայտության գեմ: Յեկ վերջա-  
 պես Ինստիտուտը պետք է անմիջապես կազմակերպի իր  
 աշխատանքների հրատարակման գործը և գիտական յերի-  
 տասարդ կազմերի պատրաստման գործը: Իր բոլոր աշխա-  
 տանքներում, —այս և մեր հիմնական պահանջը, — Ինստի-  
 տուտն անխողելիութեն կազմված պիտի լինի մեր նեղափակա-  
 կան պրակտիկայի, սոցիալիստական շինարարության կոն-  
 կրեա խնդիրների հետ:

Գիտության ֆրոնտը, ընկերներ, —այդ յերբեք չպիտի  
 մոռանալ —դասակարգային ամենասուր պայքարի ֆրոնտ ե:  
 Հայ կղերական և բուրժուական-նացիոնալիստական պատ-  
 մազրությունը տասնյակ տարիներ իր գասակարգային  
 խնդիրներին հետամուտ լինելով՝ կեղծել և կեղծում ե մեր  
 պատմությունը, մթագնել և ժողովրդական մասսաների գի-  
 տակցությունը, զանազան առասպելներով ու հերթաթնե-  
 րով աշխատել և իդեալականացնել անցյալը, ցույց տալ  
 «հայ աղքի» անցյալի «փառքը», նրա «մեսիայի դերն Ա-  
 քելքում քրիստոնեյություն և լուսավորություն տարածե-  
 լիստական պատմագրությունը տասնյակ տարիներ մշուշել  
 և աշխատավոր մասսաների գիտակցությունը հայոց պատ-  
 մության և կուլտուրայի անցյալ շրջանների «վոսկեղարե-  
 րի» առասպելներով, այդ «վոսկեղարերի» չափանիշ վերց-  
 նելով հատ ու կենտ վանականների, մեծ մասամբ այս կամ  
 այն հայ Փեղալական հարստահարեխի պնակալեզ-գովկեր-  
 այն գուների «լուսավորչական աշխատանքը»: Վերջապես նույն  
 այդ պատմագրությունը տասնյակ տարիներ կանգ չի ա-  
 ռաջ պատմագրությունը տասնյակ տարիներ համար պատմական փաս-  
 ել վոչ մի բանի առաջ կեղծելու համար պատմական փաս-  
 տերը, սվաղելու և կոծկելու համար զասակարգերի պայ-  
 քարն ու հակամարտությունը Հայաստանի պատմության  
 մեջ և թագցնելու համար ժողովրդական մասսաների սոս-  
 կալի շահագործումը հայ իշխանների, աղնվականների, տի-  
 բող դասակարգերի կողմից:

Հայ բուրժուազիան և նրա Փաշխատական կուսակցու-  
 թյունն արտասահմանում շարունակում են, հայտնի նպա-  
 տակներով, մի շարք հրատարակությունների միջոցով,  
 բուրժուական-հետադիմական ամենասև մշուշ ցանել Հայաս-  
 տանի պատմության և գրականության խնդիրների շուրջը:  
 Ինարկե, ծիծաղելի յեն ու գիտական ամենափոքր արժեքեցից  
 բոլորովին զորոկ բոլոր այդ Ադրնցների վերջին շրջանի  
 պալատական «պատմությունները» հայ «թագավորների»  
 «փառքի» մասին, Տոտովյանցի տնտեսագիտական մարզանք-  
 ները, եւ չեմ խոսում Սհարոնյանի «ավարայրյան» ցնդա-  
 բանությունների մասին: (Ծիծաղը): Ինչքան եւ, սակայն,  
 արգահատելի լինեն թշնամու «զիտական» յերւայթները,  
 արանք պետք և մեր գիտական ուժերի անմիջական հար-  
 ուանք պետք և ավելի զարգությունը լինեն:

Մաքսիզմ-ինիզմի Ինստիտուտը պետք և ավելի

լայն ու բազմակողմանի աշխատանք ծավալի՝ տալու համար Հայաստանի անցյալի պատմության և կուլտուրայի մարք սիստեմական վերլուծությունը, անցյալի իրական ու ձիւտ պատկերը, մերկացնի և վոչնչացնի կղերական, նացիոնալ-բուրժուական պատմագրության բոլոր առասպելներն ու պատմական կեղծիքները, այլպիսով իսկ պայմաններ ստեղծի անցյալի կուլտուրական ժառանգության գիտական-քննադատական ոգտագործման համար:

Բայց միայն սրանով չի սպառվում հարցը: Դասակարգային թշնամին վոտնձգություններ ե անում նաև դիմակավորված, կոնտրարանդի միջոցով, ոգտվելով կուսակցական մի շարք ընկերների շրջանում տեղ գտած փոտած լիբերալիզմից: Հիշենք թեկուզ Բորյանի գիրքը՝ «Հայաստանի պատմության» մասին և այն: Մարքսիզմ-լենինիզմի հնստիտուտը և իդեոլոգիական ֆրոնտի աշխատողները պետք ե լինեն ավելի աշալուրջ, վճռական ու անհաջողայքար մղեն թշնամի տեսությունների դեմ, ցույց տան մասսաներին շատ զեղքերում «գեղեցիկ» և «անմեղ» Փրադ-ների տակ ծածկված թշնամական, կոնտրարանդիստական տեսությունների իսկական դասակարգային աստաղը:

Գիտական Փրոնտի բոլոր աշխատանքներում մենք սովորում ենք գիտության համամիութենական շտարի՝ կոմակադեմիայի ոգնությանն ու աշխացությանը: Պետք ե հաստատել ամենասերտ, անմիջական կապ մեր գիտական Փրոնտի և համամիութենական գիտական հիմնարկների միջև: Պետք ե վճռականորեն վերջ տալ մի տեսակ ինքնամսիով այն դրության, վոր մինչև վերջերս հատուկ եր մեր մշարք գիտական հիմնարկներին:

Կրմակաղեմիայի ներկա տասնորյակի կազմակերպումը միաժամանակ մի կոչ ե գիտական Փրոնտի բոլոր աշխատանքներին՝ ըստ եյության վերակառուցվել, բարձրացնել աշխատանքի տեմպը, համընթաց քայլել բանվոր դասակարգի կուռ և ամուր շարքերի նետ:

Թույլ ավելք, ընկերներ, Հայկոմկուսի կենտկոմի կողմից չերմորեն վողջունել Համամիութենական կոմակադեմիան և բացված համարել տասնորյակի առաջին ժողով-դասախոսությունը: (Բուռն ծափահարություններ):

ԱՎԵԼԻ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՈՒ ՊԱՅՔԱՐԻՆ ԿԱՊԻՏԱՆԱԿՄԻ ԵՄԴՅԱՆ ՈՒՐ ՄՆԱՆԿԱՑՄԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԲԱՆԱԿԻ ԷՏԱՐՈՒՄ

Հայագույքուն Հայաստան Երևան-Տեղական Երևան գործադրություն Մասնակցություն Հայաստան 1931 թվականի սեպտեմբերի 28-ին Արտասահման հառ-է:

Ընկերներ, մեր կուսակցության վերջին համագումարից հետո անցած ժամանակաշրջանը, մոտ մեկ և կես տարի, — յեկալ անվիճելի առաջընթացներով հաստատելու այն դասահատականը, վոր ավեցին լինինյան կուսակցությունը և նրա հմուտ առաջնորդը միջազգային և ներքին զբությունը:

Միջազգային ներկա դրությունը բնորոշվում է, ամենից առաջ, կապիտալիզմի համաշխարհային տնտեսական կրիզիսի անընդհատ սրբամբ: Կապիտալիզմի պատմության մեջ անսախընթաց այդ կրիզիսը վաղուց արգեն իր ջրապտույթի մեջն և ամել ամրող կապիտալիստական աշխարհը: Կապիտալիստական ամենասառաջավոր յերկրներում կրիզիսը, մանավանդ վերջին լրջանում, խորունում ե և ծավալիվում: Կապիտալիստական աշխարհի մոռյլ ամպերով պատճեն յերկնականարի վրա նրա ամենալավատես սպասարկուներն անգամ չեն կարող նշանարկ լուսարցի վորեւ նշույլ: Կապիտալիզմի ներկա անտեսական ճգնաժամը, զարգանալով նրա հետպատերազման լրջանուր կրիզիսի ֆոնի վրա, ընդունելով պատմության մեջ չտեսնված ծավալ՝ հասնում ե արդին նրա ընդհանուր սնանկացման, կրախի աստիճանին: Գործազրկությունը, վոր արդին տասնյակ միլիոններ և ընդպրկում, չտեսնված թշվառության և քաղցի յե մատնում կապիտալիստական յերկրների աշխատավոր ժողովուրդներ:

բին: Արդյունաբերությունը կրծատվում է անընդհատ, տասնյակ, հարյուրավոր բանկեր և ձեռնարկություններ սնանականում են մեկը մյուսի հետեւց: Գաղտնիար կազմելու համար կապիտալիզմի կրիզիսի վերջին ետապի մասին՝ բավկան է գերցնել յերկու փաստ Անգլիայի վերջին անցուղարձերից: Այդ փաստերը վկայում են, վոր կապիտալիզմի ամենակլասիկ յերկիրը, բուրժուական աշխարհի յերեմնի այդ հեգեմոնը՝ Անգլիան, գահավիժորեն թևակիսում է իր վերջնական անկման շրջանը: Նրա հզորության յերկու գնուական սյուները ցնցվում են և քանդվում: Նրա գաղութային հզորության հիմնական պատվանդանը՝ ռազմական նավատորմն՝ այժմ այնպիսի դրության մեջ է, յերբ այդ նավատորմի ամենակարենոր միավորները կարող են նոր բանոր «գրահանավ Պատյումկիններ» դառնալ և դառնում են արգեն: Նրա Փինանսական հզորության ցուցանիշը՝ ֆունտ ստերլինգը վերջին որերս անբուժելի ճեղքվածք տվից և բռնել և այժմ սնանկացող, իջնող վայրուտայի ճանապարհ:

Անգլիական իմպերիալիզմի մայրամուտը կապիտալիստական աշխարհի ընդհանուր մայրամուտն է, ֆունտի սնանկացումը, կապիտալիստական ամբողջ սիստեմի սնանկառումը: Հին աշխարհը կապիտալիստական մեթոդներով այլևս անկարող և կարգատել այն առողջի ճեղքերը, վոր բացվում են նրա որդանիզմի վրա և հետզետե ավելի լայնանում: Ինչքան ել իրենց կացուց գուրս գան և նոր դեղատոմների դիմեն կապիտալիզմի հլու սպասավորները՝ սոցիալ-ֆաշիստները, նրանք չեն կարող վոտքի հանել մահամերձ հիվանդին: Կապիտալիզմը պատմության կողմից դատապարտված է կործանման: Պատմության ներկա փուլի միակ կենսունակ ուժն ու առաջամարտիկը՝ ճեղքափխական պրոլետարիատը կամունիստական ինտերնացիոնալի դեկավարությամբ հավաքում է իր ուժերը վերջին և գնուական մարտի համար: Նա մասսաներին պայքարի յե հանում՝ կրիզիսի ճեղքափխական ճանապարհով գուրս գալու համար:

Էնկերներ, կապիտալիզմի ընդհանուր կրիզիսի խռացման ներկա ետապը միաժամանակ ԽՍՀՄ-ում կառւցավող սոցիալիզմի հաղթարշավի ծավալման շրջանն է: Դեկավարվելով կոմունիստական կուսակցության լենինյան քա-

զաքականությամբ, մեր բանվոր դասակարգը հաղթականութեն առաջ և տանում ամբողջ գրոնավով սոցիալիստական հարձակումը: Այդ հարձակման հետեւանքը յեղավ այն, վոր արդեն ներկայումս Խորհրդային Միության եկոնոմիկան առավելապես սոցիալիստական բնույթ ունի: Մենք ձեռք բերինք պատմական նվաճումներ յերկրի ինդուստրացման ուղղությամբ, հսկայական թափով առում ե մեր արդյունաբերությունը, գրեթե գերոյի հավասարեցնելով կապիտալիստական սեկտորի գերն այդ բնադրավառում: Պետական և կոռպերատիվ առևտորի կողքին չնչին և մասնավոր առևտորի գերը: Խորհրդային և կոլեկտիվ անտեսություններն արդեն գերակռող տեղ են բանում հիմնական նշանակություն ունեցող հացահատիկային տեխնիկական բոլոր կուլտուրաների շրջաններում: Կուլակությունը, կապիտալիզմի վերջին լուրջ հենարանը, համատարած կոլեկտիվացման հիման վրա վերացվել և վերացվում ե վորպես դասակարգ:

Այս բոլորից, սակայն, սխալ կիրակ այն հետեւությունն անել թե չկան այլևս գդվարություններ մեր առաջ, թե չկան այլևս կապիտալիստական տարրեր մեր տնտեսության մեջ: Զմոռանանք, վոր գեռս 10 միլիոնից ավելի գյուղացիական տնտեսություններ մնում են կոլտնտեսություն ներից զուրս, և թեև նրանք իրենց համար հիմնականում վճռել են այսոր կամ վաղը կոլտնտեսություն մտնելու հարցը, սակայն, մինչ այդ, գյուղի անհատական սեկտորը, ճիշտ և, անհամեմատ ավելի թույլ և նվազ չափով, քան առաջ, սնուցում ե վորոշ կապիտալիստական տարրեր: Մյուս կողմից ել կապիտալիստական հարաբերությունների վորոշ արտահայտություններ, մանր-բուրժուական տարերքի արտահայտություններ, գեռ տեղ են գտնում սոցիալիստական սեկտորի վորոշ ոպակների, որինակ՝ կոլտնտեսությունների մեջ: Մանր-բուրժուական տարերքի վերջնական հաղթարժման, կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպական ամրացման, կուլակության իսպառ վերացման ճանապարհի վրա դեռևս հսկայական անելիքներ ունենք: Վարելով լենինյան անշեղ քաղաքականություն, պայքարելով յերկու քրոնտի վրա՝ զլսավոր վտանգ աջ թեքման դեմ, ինչպես և «Ճախ» խոտորումների դեմ՝ մեր կուսակցու-

թյունը վերջնականապիս կամբացնի պատմական-համաշխարհային նշանակություն ունեցող իր նվաճումները և ամբողջովին հաղթահարելով մանր-բռնը ժուական տարեքը՝ հաջողությամբ կավարտի ժողովրդական ամրոջ տնտեսության սոցիալիստական վերակառուցումը:

Ըսկերներ, ամփոփելով վերակառուցման շրջանի մեր նվաճումները, չի կարելի չհիշել այն աննշան, քայլայված ժառանգությունը, վոր ստացավ բանվոր դասակարգը՝ հաղթանակով գուրս դարսվ քաղաքացիական կոփֆերից։ Մեր աշխատանքի առաջին տարիները քաղաքացիական պատերազմից հետո՝ ժողովրդական, տնտեսությունը վերականգնված ժողովրդական տնտեսությունը չիր կարող այն պատվանդանը լինել, վորի վրա պիտի բարձրանար մեր սոցիալիստական հասարակակալիքի նոր շենքը։ Անհրաժեշտ եր ստեղծել նոր տեխնիկական բազա կառուցվող սոցիալիզմի համար, անհրաժեշտ եր արագ տեսակով վերացնել մեր յերկրի տնտեսական-տեխնիկական հետամացությունը։ Ենթարկի ինդուստրացումը, մեր հիմնական ինդիքը, պահանջում եր և պահանջում և ուժերի հսկայական լարում, ժողովրդական յեկամտի այնպիսի բաշխում, յեր միջոցների միջազգույն մասը տրամադրվում և ծանր արդյունաբերությանը՝ զարգացնելու համար տնտեսության այնպիսի ճյուղեր, վորպիսիք են մնուազը, վառելանյութը, տրանսպորտը, քիմիան, եթեկարիքիկացիան, մեքենաշինությունը։

Թեև շրջապատված չորս կողմից կապիտալիստական յերկրների թշնամական ողակով, զուրկ արդյունաբերական և գինանսական պատրաստի լայն միջոցներից, այնուամենայնիվ բանվոր դասակարգը, կուսնիստական կուսակցության զեկավարությամբ, հաղթահարելով հսկայական զբժագրություններ՝ կարողացավ հասցնել մեր տնտեսության սոցիալիստական վերակառուցումն այնպիսի զրության, յեր այս տարի ավարտում և սոցիալիստական հասարակակալիքի պատվանդանի կառուցումը։ Ինդուստրացման հաջողությունները մեր յերկրում նախապայմանը յեղան նաև դյուզատեսության նոր տեխնիկական վերակառուցումը:

ման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։

Վոչ միայն մեր թշնամիները, այլև մեր կուսակցության շարքերում ողորտունիստական դարբերը չելին և չեն հավատում, թե կուսակցության զիծը ոյտովի սոցիալիստական վերակառուցման, բորբդային և կորեկտիվ տնտեսությունների շինարարության բնագավառում էնանպի մատակարարության հաղթանակի։ Բանվոր դասակարգի թշնամիները յենթադրում ենին, վոր զյուղի մանր-բռնը ժուական ատրերքը կծախողի մեր բոլոր ձեռնարկումները, և անհամբեր սպասում ենին այզ ըստիցին։ Զախօթիելով գասակարգային թշնամու գիմազրությունը, ջախջախելով թերաւամատներին, խուճապի մատնված բոլոր տեսուի սպորտունիստական տարրերին, մեր կուսակցությունը կարողացավ ապահովել վճական հաղթանակը նաև զյուղանահության սոցիալիստական վերակառուցման բնագավառում։ Խորհրդային Սիություն զյուղացիության կեսից ավելին ներկայում կազմում և բանվոր դասակարգի ամուր և հաստատուն հետարանը զյուղում (կոլտնահային զյուղացիություն)։

Խորհրդային Սիությունը թեակնիսց այսպիսով իր զարգացման նոր շրջանը, յեր թեկ զեռ մնում են մը առաջ բազմաթիվ ու մեծ զժվարություններ, բայց վորոնք սիստեմատիկորեն հաղթահարվում են, և ամենալայն մաս սաներն իրենք պարզ տեսնում են և փորձել ու յուրացնում են զժվարությունների հաղթահարման միակ ճանապարհը, լինինյան ճանապարհը։ Հայանի յի, վոր տյո տարի աշխատանքի յեն անցնում 518 արդյունաբերական նոր հսկաներ։ Այս արդեն իր հերթին մի շոշափելի առաջինազարդ և անհրաժեշտության թագավորություննից զեպի աղատության թագավորությունը։ Հսկայական, միլիարդներ կարմաղ միջոցները, վոր մենք տնտեսելով ամեն զծով, ներդնում ենինք արդյունաբերության մեջ, սկսում են անմիջական արդյունք տալ Հանրապետություն և ստեղծվում, ծանր արդյունուրերության արագացման զարգացման զուգընթաց, ավելի մեծ չափերով զարկ տալ թեթև արդյունաբերության զարգացմանը՝ զբանով իսկ հնարապետություն ստեղծելով ավելի լայնորեն բավարարելու աշխատավոր մասնակիւթիւնը։

ոռղական կարիքները, ավելի բարձրացնելու նրանց նյութական-կենցաղային մակարդակը: Այսպիսով, «ունք ջախջախեցինք և հաջողությամբ հաղթահարում ենք կապիտալիստական տարրերը գյուղում և քաղաքում» (Ստալին): Այս փոնի վրա բնչակես ե գրվում ինժեներակիների, գյուղատնտեսների, մասնագետների և նրանց աշխատանքի հարցը ներկա ետապում:

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ ՑԵՎ, ԽՈՐՀԻՇԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բնկերներ, այս հարցին պատասխանելուց առաջ անհրաժեշտ ե վերիշել մասնագետների գիրքը խորհրդային իշխանության նկատմամբ Հոկտեմբերյան հեղափոխությունից մինչև վերջին շրջանը: Հայոնի յե, վոր Հոկտեմբերից անմիջապես հետո տեխնիկական ինտելիգենցիայի ստվար մասը, մասնավանդ նրա մենաշնորհյալ խավերը, թշնամական դիրք բռնեցին խորհրդային իշխանության հանդեպ: Համարելով պրոլետարական հեղափոխությունն ավանտյուրա, սպասելով նրա «անխուսափելի» պարտությանը, մասնագետների մի խոշոր մասը սարստածի գիրք՝ բռնեց բանվոր դասակարգի հանդեպ: Քաղաքացիական պատերազմից հետո, նոր տնտեսական քաղաքականության առաջին շրջանում, այդ մասնագետները «վերաքննելով» իրենց դիրքը՝ մասսայորեն աշխատանքի անցան: Մակայն գաղտնիք չե, վոր դրանցից առանձին, հատկապես վերին խավերը, աշխատելով մեղ հետ վերականգնման շրջանում, իրենց հույսերը կապում ելին խորհրդային իշխանության «խաղաղ վերաբերման» և այդ ճանապարհով՝ կապիտալիզմի սեստավարդությունից վրա մասնագետները առաջ հայտնաբերություն ունեցան: Այսպիսով, աշխատանքի առաջանական մասնագետները առաջ հայտնաբերություն ունեցան:

Վերակառուցման շրջանն ողը ցնդեցրեց մասնագետների վերնախավի այդ հույսերը: Դասակարգային պայքարի հետագա ծայրատիճան սրումը, գյուղի սոցիալիստական վերակառուցման ասպարեզում մեր վճռական քաղաքականությունը, մեր աշխատանքներում առաջ յեկող մի շարք լուրջ գժվարություններն ուժեղացրին մասնագետների տատանումները: Դասակարգային պայքարի սրումն իր գրոշմը պիտի դներ և մասնագետների դեպի բանվոր դա-

սակարգն ունեցած գիրքի վրա, մանավանդ մասնագետների այն մասի, վոր ժամանակավորապես համակերպելով խորհրդային կարգերին՝ գեռ չի խզել իր կապերը նախկին տերերի հետ: Դասակարգային պայքարի ցալառն արտահայտություններից մեկն եր, ահա, վնասարարությունը, վոր մի ժամանակ լայն ծավալ ստացավ մասնագետների շրջանում և տեղ գտավ Խորհրդային Միության արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերում: Ակտիվ վնասարարությունն առաջ մնունդ եր ստանում այդ ժամանակ մասնագետներում մեծ մասի արամազդրությունն արտահայտող «լույալության» կամ «չեղոքության» աղբյուրներից:

Այդ գրությունը, սակայն, յերկար շարունակվել չեր կարող: Մի կողմից պրոլետարական գիլտատուրայի պատժիչ որդանները լույս աշխարհ ելին հանում և անողոք պատժի յենթարկում վնասարարներին; մյուս կողմից՝ մեր հաջողությունները, բազմաթիվ դժվարությունների հաղթահարումը, քաղաքի և գյուղի կապիտալիստական տարբերի ջախջախումն ու ընկճումը, կապիտալիզմի համաշխարհային անտեսական կրիզիսը և այն՝ «արժեքների վերականգնատման» միւմի ազգու մղիչ ելին հանդիսանում տեխնիկական ինտելիգենցիայի համար: Նոր պայմաններում սկսում ե բեկում առաջ գալ ինտելիգենցիայի տրամադրությունների մեջ: Բնկ. Ստալինը միանգամայն ժամանակին ե շեշտում, վոր «...այդ նոր հանդամանքները չելին կարող ազգեցություն չգործել մեր հին տեխնիկական ինտելիգենցիայի վրա: Նոր պայմանները պետք ե ստեղծելին և իրոք ստեղծեցին նոր տրամադրություններ հին տեխնիկական ինտելիգենցիայի մեջ: Իսկապես դրանով ե բացարկում այն փաստը, վոր առաջ վնասարարներին համակրող այդ ինտելիգենցիայի վորոշ մասը խորհրդային իշխանության կողմը գառնալու վրաց նշաններ և ցույց տալիս: Այն փաստը, վոր վոչ միայն ինտելիգենցիայի այդ խավը, այլև յերեկով վնասարարների զգալի մասն այժմ բանվոր դասակարգի հետ միասին սկսել և աշխատել մի շարք գործարաններում ու ֆաբրիկներում, այդ փաստն արդեն անտարակույս վկայում ե, վոր հին տեխնիկական ինտելիգենցիայի շարքերում արգեն բեկում ե սկսվել: Հարկավ, այդ

չի նշանակում, վոր մեղ մոտ այլեւ մշասարար չկա: Վնասա-  
սարարներ կան և կլինեն, քանի մենք դաստիարագեր ու-  
նենք, բանք կա կապիտալիստական շըջապատ»:

Բեկման, շըջագարձի նշաններ, ահա ինչն և հատկա-  
նշականը և ամենակարևորը տեխնիկական ինտելիգենցիայի  
արամագիւթյաւնների մեջ ներկայաւում:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԳԵՑՆԵՐԻ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՊՐԱԾԵՍԼ

Հնկերներ, Խորհրդային Հայաստանն անբաժան ու-  
որդանական մասնիկն և Խորհրդային Միության և՝ քաղա-  
քականագիւթյան և տնտեսական-հասարակական զարգացման  
ընդհանուր ռողբներով: Պարզ ե, վոր Հայաստանի մասնա-  
գետները չեյին կարող է իմաստականում չանցնել այն պրո-  
ցեսների ու շերտավորման բովով, վորով անցավ տեխնի-  
կական ինտելիգենցիան ամրող Խորհրդային Միության  
մեջ: Այդ տեսակեալից ի՞նչ խոսք, վոր Հարաշար սիրալիում  
են այն ընկերները, վորոնք կարծում են, թե Հայաստանի  
կամ հայ մասնագիւներն իրենց «ընություն» կամ «եյու-  
թյամբ» անհամատեզելի յեն վասարարությանը: Հայաս-  
տանի այլպիսի «յուրաքանչառուկ» «իմունիտետի» ամենա-  
ցայտուն գովքը յերգում ե ընկ. Բոլցանն իր ախրահաշակ  
աշխատության յերկընորդ հատում: Նրա զրգում կար-  
դում ենք.

«Հայկական ինտելիգենցիայի լիբերալ վոզին, Հայաս-  
տանի սահմանադրական իրադի խորհրդային լիբերալիզմը,  
Խորհրդային Հայաստանն Արևելքի հանրապետությունների  
կարգը դասելը և Խորհրդային Ռուսաստանի վերաբերմուն-  
քը դեպի Հայաստանը հող ստեղծեցին հայ «Ժողովրդի» հետ-  
դաշինք, ըլոկ և այլն կնքելու համար, վորը նպաստեց սա-  
րսամաժը և բյուրոկրատիզմը խորհրդային պետական, կո-  
ռուպերատիվ և անտեսական ապարատի ռեժիրով վերացնե-  
լուն, հնարավորություն ավեց ինայտարար ծախսելու յեր-  
կը սեսուրաները և հոգատար վերաբերվելու «Ժողովրդի»  
սիփականությանը՝ ստեղծելով նոր արժեքներ, զարգացնե-  
լով կուլտուրան և նպաստելով պրոցեսուն՝ ամբողջու-  
թյամբ առաջ հողուա հայ «Ժողովրդի» (Բորյան, յերկընոր-  
դական, եջ 215):

Այսուհետեւ «Բյուրոկրատիզմը, շոալությունները  
(ինայողության ռեժիմ) և պետական ապարատի այլ զի-  
գեկտներ այսուղ չեն զիգացնում, վորովհետև աղստավոր  
մասսաները ներզամական են անտեսական և խորհրդային  
շինարարության պրոցեսում: Սաբուաֆ և թշնամիկան այլ  
ականք ինտելիգենցիայի կողմից Հայաստանում տայցեա-  
կան» (նույն տեղ, եջ 212):

Կամ թե՝ «Հայկական Փրականությունն ամենից շատ  
եր նպաստում ընտկչության գանագան խօթավությունի ու  
եր նպաստում ընտկչության գանագան խօթավությունի ու  
թյունն ու պարմաններն որյիկոտիլ հանգամանքներ ենին,  
թյունն ու պարմաններն որյիկոտիլ հանգամանքներ ենին,  
և զասակարգային կարդի սուրբեկափ արամադրություննե-  
րից անկախի բնակչությանը կանգնում եր այն տեսակիուի  
բարիք անկախի բնակչությանը կանգնում եր այն տեսակիուի  
բարիք անկախի բնակչությանը անհրաժեշտությունն են» (նույն  
տեղ, եջ 203):

Կարիք կմ շեշտելու, վոր այս լիբերալ-հակամարք-  
ունատակիուն անսակեալ միջ մի առնչություն չունի: Այս  
կուսակցություն տեսակեալ հետ: Կարիք կմ բացարելու,  
վոր սոյիալիզմի վնարարություն պրակտիկան Հայաստա-  
նում քարուքանդ և անում ընկեր նորյանի այս պարմանք-  
ի «իդիոֆան» և վոր վասարարությունն իր վորոց արտա-  
վար բյուրոկրատիզմի, ամիելորդ ծախսերի, շոալություն-  
ության պատճենից յերկընորդ յերկընորդ ամենա-  
աշխատավոր անհրաժեշտությունն է անհրաժեշտությունն են:

Հայտնի յե, վոր խորհրդային իշխանության հաստո-  
տումը Հայաստանում զուգողիպեց նոր տնտեսական քաղա-  
քականության առաջին քայլերին, յերք սարսամքը՝ մոր-  
ության մասայական յերկույթ արդին վերանաւմ իր Խորհրդ-  
ային Ռուսաստանում: Հեն ինտելիգենցիայի ստվար մո-  
ւուր, հատկապես նրա վարի խարիերը (մասսայական ուսու-  
մը, գյուղատնտեսները և այլն) հենց սկզբից իրենց  
նվիրաբերիցին պրոլետարիատի աշխատանքին ու պայքա-  
րին իսկ պիտակություն բարձրարարի ինտելիգենցիայի  
ընկերության միացին միայն «հաշտիկիցին» խորհրդային իշ-

խանության հետ, տարվելով սմենովեխական հովերով։ Զբացորդային իշխանությունը հսկայական գումարներ և տրամադրում շինարարական նպատակներով, դարձ և տալիս ազգային կուլտուրայի ծաղկմանը։

Յեվ ահա մեր ինտելիգենցիայի սմենովեխական-աղեգայնական խավերը նկատելով շինարարության և կուլտուրայի ծաղկման փաստեր՝ համառորեն փակում են իրենց աչքերն այն փաստի առաջ, վոր մեր շինարարությունը դասակարգային շինարարություն ե, վոչ թե, ինչպես նացիստական կուլտուրան է ձևակերպել նրանց բաղձանքները, «ազգաբնակության տարբեր դասակարգերի և խմբակների միության» (Բորյան) շինարարություն, վոր մենք կառուցում ենք սոցիալիզմ, վոր մեր զարգացրած ըստ ձեփ առգային կուլտուրան խորապես տողորված եպրոլետարական ինտերնացիոնալիստական բովանդակությամբ։ «Այսոր այսպես, վաղն ուրիշ բան կարող է լինել»։ Այսպիսի մտածողության տեր մարդիկ զնու հիմի ել կան։ Այսպես՝ քաղ. Քաջազնունին, չնայած իր ծերունի հասակին, յերիտասարդի պես վոգեսրվում ե մեր շինարարությամբ, մեր կուլտուրական վերելքով։ Սակայն նա և նրա նմանները չեն ուզում, կամ չեն կարողանում հաշտվել այդ շինարարության սոցիալիստական իմաստի ու բովանդակության հետ, շարունակելով զարդարված մնալ սոսկ լոյալության փետուրներով։

Ինտելիգենցիայի շերտավորումը, ինչպես Խորհրդային Միության մեջ, նմանապես և մեղ մոտ, չեր կարող չխորանալ դասակարգային պայքարի սրման և մեր նվաճումներին զուգընթաց։ Զեզոքության, լոյալության սառուցը հալչում ե, և շրջադարձի ակնհայտ նշաններ յերեսմ են նաև մեղ մոտ։ Այդ մասին են վկայում այն տասնյակ և հարյուրավոր բանաձեկերը, վոր ընդունել են վերջերս զանազան բնագավառներում աշխատաղ մասնագետները, գյուղատնտեսները, ինժեներներն ու տեխնիկները։ Այդ մասին ե վկայում մեր տեխնիկական ինտելիգենցիայի ընդհանուր առամք ավելի ակտիվ, ավելի նվիրված աշխատանքը վերջին շրջանում։ Այդ են վկայում ինտելիգենտական շրջաններից կուսակցության մեջ մանելու համար արվող բազմացումը։

Այդ բնեկման արտահայտությունն է նաև այն պայքարը, վոր ծավալվեց վերջին շրջանում մեր ինտելիգենցիայի մեջ՝ ընդդեմ թշնամական իդեոլոգիայի ու սրբակալիկայի, ընդդեմ «չեղոքության» ու «լոյալության» և պիտակությունը մեր մամուլի կողմից, և դրա հետևանքը յեղակինակենցիայի ամենալայն մասսաների ավելի սերտ համախմբումը մեր կուսակցության շուրջը և մի խումբ խորթ, նացիստական տարբերի մեկուսացումը։

Դաշնակները դավաճանած կլինեյին իրենց, յեթե չըրարձացնեյին մի նոր վոստոց ինտելիգենցիայի հարցի շուրջը, «Դրոշակի» և գաշնակների մյուս թերթուկների կոկորդիլոսյան արցունքներից, վոր նրանք թափեցին վերջերս «հայ ինտելիգենցիայի հալածման առթիվ», կեղտոտ մեգետ կարող ե գոյանար Մենք և մեզ հետ միասին Հայութանի ինտելիգենցիայի լայն մասսաներն այս անբամ ել արհամարհանքով կպատասխանենք զաշնակների միարար հաջոցներին։ Մենք չենք ել թագցնում, վոր հալածել ենք և ոլիտի շարունակենք հալածել դաշնակ մասնագետին, զայսար մասնագետին, հականեղափոխական-նացիոնալիստական տարբերին, նրանց, վորոնք կփորձնեն խանդարել մեր շինարարությունը, ստրկային գագութի վերածել մեր խորհրդային ազատ յերկիրը։ Սակայն, այդ տիպի մասնագետների աեսակարար կշխն ինտելիգենցիայի ընդհանուր մասսային մեջ աննշան լինելով, այժմ սկսում ե ավելի և անշահան դաստիար Ահա թե ինչու ինտելիգենցիայի, տեխնիկական ինտելիգենցիայի գերակշռող մեծամասնության նկատմամբ, վորն այսոր ավելի ամուր և հաստատուն, քան յերբեք, քայլում և սոցիալիզմը կառուցող բանվոր դասակարգի շարքերում, մեր վերաբերմունքը չի կարող չվիճակ առավելացույն հոգատարություն ցուցարերելու վերաբերմունք։ Ավելին, այն մասնագետների նկատմամբ, վորոնք գետ մոտիկ անցյալում ունեցել են տատանումներ, բայց ներկայում վճռականորեն զեն շպրտելով այդ տատանումները, ընդունելով իրենց սխալները, ազնվորեն լծվում են սոցիալիզմի կառուցման աշխատանքներին, մեր վերաբերմունքը բարեկամական մի գործակցի հոգատար վերաբերմունք միայն կարող է լինել։

Իհարկե, նման հարցադրումը, ինտելիգենցիայի արաւամպությունների մեջ կատարված շրջադարձը դեռ չի նշանակում, թե /մեղ մօտ ֆասարությունը՝ վորպիս յերեւյթ/՝ վերջնականապես և ինտառ արժատախիլ արված պիտի համարել «Վնասարարներ կան և կլինեն, քանի մենք դասակարգեր ունենք, քանի կա կաղթառական շրջապատ» (Ստալին): Մեր մասնադիւնների տրամադրությունների շրջադարձի արաւայացառները պիտի լինի նաև՝ այս, վոր նրանք ամելի պատաս լինեն պետի հակածեղափոխական եկամուտների ֆասարարության համարվոր փորձերը, ամելի սերտ կազ հաստատեն բանովուական կազմակերպությունների հետ, ամելի ակտիվ հասարակական աշխատանք կատարեն այդ կարմահերովությունների շարքերում:

Ընկերներ, հայտնի յե այն հակայական, սուր պատճանջը, վոր ունենք մասնադիւններ կադրերի գծով: Հայտանում յնդած մոտ 2,000 ինժեներները, տեխնիկները և զյուղատնտեսները չեն բավարարում աճող այն պահանջները, վոր առաջարկում և արագ տեսավլ բարձրացող ու վերակառացվող մեր տնակեռությունը: Տարեցարի աճում են հիմնական ներդրություն արերության և զյուղատնտեսներության մեջ: Յիթի 1923-24 թ. մինչև 1927-28 թիվը կադիւնալ ներդրությունը մեր անտեսության մեջ կազմում եյին 69 միլ. ոռորդի, ապա հետագայում ստանում ենք հետեւյալ պատկերը.—1928-29 թ.: մոտ 40. միլ. ոռորդի, 1929-30 թ.: 53 միլ. ոռորդի, հատուկ յեսամոյակ՝ 11 միլ. ոռորդի և 1931 թ.: 134 միլ. ոռորդի: Արդյունաբերություն չունեցած մեր յերկրում բարձրանում են նոր զորաբաններ, մեքենայացվում և զյուղատնտեսությունը, զյուղն ստանում և մեծ քանակությամբ բարդ մեքենաներ: Այս բոլորը վորակյալ կադրերի հակայական պահանջ են զնում:

Ի՞նչպիս ենք լուծելու կազմերի հարցը:

Ամենից առաջ զանալ, վոր ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգն ունենա իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան»—այս և ինչիքը, շեշտում և ընկ. Ստալինը: Նա ընդգծում է, վոր «մեղ հարկավոր են հրամատական, ինժեներա-տեխնիկական այնպիսի ուժեր,

վորոնք ընդունակ լինեն հասկանալու մեր յերկրի բանվոր դասակարգի քաղաքանությունը, ընդունակ լինեն յուշացնելու այդ քաղաքականությունը, պատրաստ լինեն խղճի մտոք իրականացնել այդ քաղաքականությունը»:

Ենչու դնելով բանվոր դասակարգին հարադատ նոր տեխնիկական ինտելիգենցիայի պատրաստման գործի վրա, թերապնահատմամբ ենք արդյոք վարեն չափով հին ինտելիգենցիայի դերն ու նշանակությունը: Բնակ: Հին ինտելիգենցիայի այն շերտերը վորոնք ազնվորեն ձգտում են միաձաւլվել բանվոր դասակարգի հետ, բանվոր դասակարգի ինչիքները գիտում են վորպես իրենց սեփական ինդիբեներ, «պատրաստ են խղճի մտոք իրականացնել կուտակությունը քաղաքականությունը», նրանք մեզ համար ամենացնակալի զինակիցներն են, և պետք և վոր նրանք անվիրապահորեն քայլելով բանվոր դասակարգի հետ միևնույն շարքերում, իրենց հարուստ փորձը և ունակություններն ի սպաս զնեն ոսցիսլիկմի կառուցման մեծ դործին:

Հին մասնագետների մասին, նրանց մեջ սկսված և ծագվալվող բեկման կապակցությամբ, մեր նոր հարցադրությունից անմիջապես գործնական յեզրակացություններ պիտի անեն մեր բոլոր կազմակերպություններն ու բանվորական մասնակերը: Արմատախիլ անել «սպեցանության» մանրը բռնժութական-անարթիստական տրամադրությունների ամեն մի արտահայտություն, շրջապատել մեր գործին նվիրված մասնագետներին ընկերական ուշադրության և հոգատարության մթնոլորտիվ, ամելի ակտիվ միջոցներով ներշնորության մթնոլորտիվ, ամելի ակտիվ միջոցներով ներշնորության մթնոլորտիվ, ամելի սեփական աշխատանքների մեջ, ստեղծել մասնագետների համար աշխատանքի և կենցաղի ավելի բարենպատ պայմաններ, քան մինչև այժմ,—ահա ինչպիս և դրվում խնդիրը:

Եյս առթիվ չենք կարող չշեշտել, վոր մեր կուտակութական, պրոֆեսիոնալ և այլ կազմակերպությունների վոչ բոլոր ողակներն են բավականաչափ և կոնկրետ կերպով յուրացրել այդ մոմենտը: Հնկ. Ստալինի ճառի քննարկություններում առանձին տեղերում կամ ուղղակի անցան ինտելիգենցիայի վերաբերյալ՝ առաջնորդի աված ցուցում:

ների վրայով, կամ սահմանափակվեցին հարցի հարեանցի, ընդհանուր, վոչ կոնկրետ դրվածքով: Այսպիսի փաստերից միայն մի հետևություն կարելի յէ անել և պետք է անել, այն եւ գործնական միջոցառություն ամենուրեք առահուզել կուսակցության դիրեկտիվների անշեղ կիրառումը տեխնիկական ինտելիգենցիայի նկատմամբ ունենալիք դիրքավորման ասպարեզում: Կասկած չի կարող լինել վոր մեր պետական-տնտեսական որդանները և բոլոր կազմակերպությունները կկարողանան կարճ ժամանակում այդ գծով իրական բեկում ստեղծել:

### ՄԵՐ ՄԱՍՆԱԳԵՑՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերներ, Հայաստանի մասնագետների հերթական անելիքները պայմանավորվում են այն հիմնական խնդիրներով, վորոնք դրված են ներկայումս բանվոր դաստիարակի առաջ: Մենք պայքարում ենք մեր շինարարության տեմպի ել ավելի բարձրացման և արագացման համար, մենք պայքարում ենք մեր պլանների կատարման և գերակատարման համար: Զնայած այն հանգամանքին, վոր վճռական տարբա մեր աշխատանքի պլանները միանգամայն ռեալ են և իրադիմելի, բայց և այնպիս մենք մեր արդյունարերության մի շարք, նույնիսկ կարևորագույն ճյուղերում (պղինձ, տեքստիլ, կապիտալ շինարարություն) ունենք ամսթալի ձեղքվածքներ: Ճեղքվածքների հիմնական պատճառն այն է, վոր նոր պայմաններում մենք դեռ չենք կարողանում «սոր ձեռվ աշխատել, նոր ձեռվ դեկավարել»:

Ընկ. Ստալինն իր հայտնի ճառում չափազանց ցայտուն կերպով ձևակերպեց այն պայմանները, վորոնք անհրաժեշտ են պլանների կատարումն ապահովելու համար: Բանվորական ուժի կազմակերպված հավաքագրում և աշխատանքի մաքսիմալ մեքենայացում, աշխատավարձի ճիշտ կազմակերպում և մանր-բուրժուական հավասարականության վերացում, դիմագրկության վերացում արդյունաբերության մեջ և առհասարակ կուտակման նոր աղբյուրների ստեղծում, անտեսական հաշվարկի անշեղ կիրառում — ահա այն հիմնական լծակները, վորոնց վրա հենված պիտի կա-

բողանանք ապահովել բարձր տեսպ, պլանների կատարումը: Յեվ յեթե յերկու խոսքով ձևակերպենք մեր մասնակետների անելիքները ներկայումս, պիտի ասենք, վոր նրանցից ամենահիմնականը ընկ. Սա լինի արծարծած խնդիրների լուծումն է:

Մինչդեռ անհրաժեշտ և սկզբից ենթ շեշտել վոր մեր մասնագիտական ուժերն զգալի թերացում ունեն այս ասպարեզում: Նրանք դժվարությամբ են հրաժարվում աշխատանքի հին, արխայիկ ձևերից, դժվարությամբ և զանդաղ են վերակառուցվում նոր պայմանների համեմատ: Վեցրեք աշխատանքների մեխանիզմացիայի հարցը, այս ուղղությամբ մեր խնդեներների ստեղծագործական միտքը շատ և զանգազաշարժ: Խնդիրը միայն այն չե, վոր հաճախ բացակայում և սարգավորվում, այլև այն, վոր չեն ոգտագործվում նույնիսկ յեղած հասարակությունները՝ շատ ընկերներ ուղղակի թերագնահատում են և չեն զբաղվում այս հարցով: «Խորհրդացյին Հայաստանում» յես կարգացի, որինակ, վոր ինժեներներ Ալլարովը և տեխնիկ Գիգոն հայտարարում են, թե «Հայաստանի պայմաններում մեխանիզմացիան աննպատակահարմար է, վոր մեր պայմաններում մեխանիզմացիան անհրաժեշտ եֆեկտը չի տալիս»: Դեպի այս կարեռ հարցը յեղած այդպիսի անհանգութեալի, ասիական վերաբերմունքը չե արդյոք պատճառը, վոր թանգարին և խիստ դեֆիցիտային մի շարք սարքավորութենք (եքսկավատորներ և այլն) մեզ մոտ որերով ու չնչին պատճառներով չեն աշխատում, և այդպիսով ընկնում են բանց ոգտագործման կոնֆիցինալը:

Կամ միթե անվիճելի չե, վոր աշխատանքի կազմակերպման, դիմագրկության գեմ պայքարելու, անտեսական հաշվարկը կիրառելու կամ սլլաները մինչև ստորին ողակները հասցնելու գործում մեր մասնագետներից շատերը վոչ միայն անհրաժեշտ ակտիվություն չեն ցուցաբերում, այլև շատ անգամ իրենց «գգուշավորությամբ» կամ մտավախությամբ խոչընդունի դեր են կատարում: Ճիշտ ե, կան նաև զեպքեր, և քիչ չե գրանց թիվը, յերբ մեր անտեսական ձեռնարկների վարչական զեկավարությունները բավարար չափով չե ընդառաջում ինժեներատեխ-

նիկական կտորմի կողմից արված առաջադրանքների կիրառ նաևը: Ալլահի երդում, որինակի, չի կիրառված մասնա զետի առաջարկը մեխանիկական ցիլին նորմաների և գնաւ հատումների վերաբերմամբ, դիրեկցիայի կողմից առուշա զրության են մատնված հանքերի ռացիոնալացման ու մե քենայացման վերտքերյալ արված առաջարկները և այլն: Այս հանգումանքն իր հերթին պահանջում և մեր մասնա դիտական կազմերից ավելի բարձր հասարակութան ակտի վություն, նրանց կազմակերպությունների ավելի պլանա ցին աշխատանք, պահանջում և չփախենալ նոր տեխնիկա կանարատական ինդիրներում վորոշ սիսկից, լինել ավել ի համար ու անհկուն իրենց աշխատանքների գծով ապա հովելու համար ընկ. Ստալինի առաջադրած մարտական ցուցումների կիրառումը:

Ներկայումս մեր մասնագիտական կազմերի առաջ հա տուկ խնդիր և գրված՝ ակտիվորեն աշխացել ռուսիկան մասսաներին լուղունգի կիրառմանը: Մեր արդյունաբերության մեջ և զյուղում ստեղծվում ենոր տեխնիկական բազա: Յեզ այդ պահանջում և լայնածավալ աշխատանք՝ բարձ րացման համար մասսաների, մանավանդ նոր, յերիտասարդ բանվորների, կոլտնտեսականների, տեխնիկական մակարդա կը: Առանց դրան անհնար և նոր մեքենաների, նոր սարքա վրման նպատակահարմար սպառագործումը, մանավանդ զյու ղում:

Մեր գյուղը ներկայումս ստանում է հսկայական քա նակով գյուղատնտեսական զործիքներ: Գյուղացին պա հանջում և արակոր, կալսիչ մեքենա: Մեր թշնամիների կտրվածությունն իրական կյանքից այն աստիճանի յե համառմ, վոր նրանք հնարավոր են համարում ուղղակի ծի ծաղելի տեղեկություններ հնարել որինակ՝ եսերական տի բացու և նորվարյանը կերենսկու «ՃԱՆ» ժուրնալում զրում ե, թե «Այստեղից (Կովկասից) յեկած մասնավոր տեղեկություններն (ինարկե, Փարիզի սրճարաններում հորինված) առում են զյուղացիների կողմից տրակտորների վրա կա տարվող սիստեմատիկ հարձակումների մասին, շատ գեղ քերում այդ արվում և ստանալու համար տրակտորի միջ նավթը, յերբեմն ել վասարաբարական նպատակով»:

Յես դիտմամբ բերի Խոնդկարյանի այս պոչավոր սուտը, վորպեսպի հակաղղեք նրան իրականությունը դուք զիտեք, թե ինչ հսկայական պահանջ և առաջա դրում գյուղը նույն այդ տրակտորների նկատմամբ, որ չի անցնում, վոր առանձին գյուղերի ու կոլտըն տեսությունների ներկայացուցիչները չեն մեր կենաքո նական որդաններին՝ արակտոր կամ կալմիչ ստանալու հա մար: Յեզ սակայն մեծ դժվարությամբ ստացվող այդ մե քենաները շատ անզամ յերկար ժամանակով անզործ ըն կած են մնում, չնորհիվ մեր կոլտնտեսականների տեխնի կական ցածր մակարդակի: Շատ անզամ մեքենաների վորեն մասի սովորական նորոգումն որեր և շաբաթներ և պահան չում, մինչև վոր քաղաքից տեխնիկ գա: Ահա թե ինչու ամենակարեռը խնդիրներից մեկը, վոր զրվում ե մեր մաս նազետների առաջ, մասսաների տեխնիկական մակարդակի բարձրացման աշխատանքն ե, վորին և պետք և լծին անմիջապես մեր տեխնիկ ընկերները, ինժեներները, գյու ղատնտեսները: Յեզ լավագույն քայլը կիմեր, յեթե ներ կա համագումարն առաջին որինակը տար, յեթե համագու մարի յուրաքանչյուր պատզամագոր այստեղ խոսք տար՝ համագումարից անմիջապես հետո կազմակերպել մեկական տեխնիկական խմբակ և կանոնավոր կերպով զեկավարեր այդ խմբակի աշխատանքները:

Անհրաժեշտ ե պայքար մղել այն տարրերի դեմ, վո րոնք թերազնահատում են այս աշխատանքների կարեռությունը: Ինձ հայտնեցին, վոր ինժեներ Ծատուրովը յեր կաթուղայինների ընդհանուր ժողովում ասել ե: «Մենք տասը տարում հազիվ ենք կարողացել մասնագետ դառնալ իսկ գուք ուղում եք յերեք ամսում մասնագիտացնել բան վորներին: այդ հնարավոր չես: Կամ, յերբ զիմել են ինժե ներ Դոլուխանյանին և ինպրել, վոր պարապի մի բանվոր գյուտարարի հետ (վորը չորս գյուտ ունի արած), նա կա տեղորիկ կերպով մերժել ե: Մեր մասնագետների հասարա կայնաւթյունն ինքը պետք ե կատաղի պայքար մղի նման յերեւյների դեմ, իր լավագույն ուժերը տրամադրելով տեխնիկական գիտելիքների տարածման գործին:

Հետեւյալ կարեռը խնդիրը մասսայական ուժերի ճիշտ

բաշխումն ու սկտագործումն ե, և այս գործին նույնպես  
ինժեներ-տեխնիկների կազմակերպություննիր ակտիվ մաս-  
նակցությունը պիտի բերի: Հայտնի յե մասնագիտական  
ուժերի այն սուր պահանջը, վոր զգում են մեր արդյունա-  
բերության առաջատար ճյուղերը, որինակ՝ Դափանի պղըն-  
ձահանքերը. հայտնի յե, որինակ, վոր Արթիկ-Տուֆուներ-  
կայում ինժեներ գրեթե չունենք: Եեվ արդյունաբերու-  
թյան կարեռ ճյուղերը տեխնիկական ուժերով չեն ապա-  
հովի, մինչև վոր մեր մասնագետներն իրենք չըմբռնեն այդ  
ճյուղերի նշանակությունը և արդյունաբերության այդ  
ճյուղերում ճեղքվածքների վերացումն իրենց պատվի գործ  
չհամարեն: Համագումարն ինքը ինդիր պիտի դնի ինժե-  
ներների կազմակերպությունների առաջ՝ պարսպանքի  
յինթարկելու այն մասնագետներին, վորոնք խուսափում են  
ըջաններում աշխատելուց, վերացնելու մեր տեխնիկական  
ուժերի բաշխումը՝ հեռավոր, բայց կարեռ շրջաններն առա-  
ջին հերթին մասնագետներով ապահովելու նշանաբանի տակ:

Եեվ վերջապես, ժամանակն ե ավելի ակտիվ և գոր-  
ծունյա դարձնել մասնագետների պրոֆմիութենական  
կազմակերպությունները, վերացնել քաղաքական անդրա-  
գիտությունը մասնագետների շարքերում և այդպիսով  
նրանց ավելի ակտիվ մասնակից դարձնել մեր պայքարին և  
աշխատանքներին:

Մյուս կողմից ել, ընկերներ, ճեզ հայտնի յե, թե ինչ  
հակայական քայլերով են առաջ գնում գիտությունը և տեխ-  
նիկան մեր ժամանակ: Զհետելով գիտության և տեխնի-  
կայի պրոգրեսին, նրա նորանոր կատարելագործություն-  
ներին՝ մեր մասնագետները, Հայաստանի պես տեխնիկայի  
տեսակետից համեմատաբար հետամնաց մի յերկում, ան-  
խուսափելիորեն հետ են մնում: Մինչդեռ մեզ մոտ այժմ  
գդզվար թե ճարպի մասնագետների վորեւ խմբակ, վորն  
իրեն նպատակ դրած լիներ հետեւ տեխնիկայի զարգաց-  
մանը, բարձրացնել մասնագետների վորակը և այլն: Ահա  
թե ինչու մեր մասնագետների կարեռ անելիքներից մեկն  
ել այն պիտի լինի, վոր նրանք կազմակերպված աշխատան-  
քով (խմբակների, դասախոսությունների, Խորհրդային Մի-  
ության արտադրական կենտրոններն եքսկուրսիաները ու-

դարկելու և այլն միջոցնվ) նպատակ դնեն հետեւ գիտու-  
թյան և տեխնիկայի վերջին խոսքին և իրենց աշխատան-  
քում ոգտագործել տեխնիկայի նորություններն ու կատա-  
րելագործությունները: Ինչ խոսք, վոր մեր տնտեսական  
որդաններն ամեն կերպ պիտք և աջակցեն այս աշխատանք-  
ներին՝ մասնագետների համար ստեղծելով բոլոր անհրա-  
ժեշտ պայմանները, որինակ՝ ննարավորություն ընձեռելով  
ձեռք բերելու արտասահմանյան գիտական-տեխնիկական  
դրականություն և այլն:

Եեվ վերջապես՝ վերջին ինդիրը. մասնագետների պրո-  
ֆեսիոնալ կազմակերպությունները, մեր տնտեսական և կո-  
ոպերատիվ որդանների հետ միասին, անմիջապես մի շաբթ  
գործնական միջոցներ պիտի կիրառեն՝ բարելավելու համար  
մասնագետների տնտեսական-կենցաղային պայմանները:  
Մենք, անշուշտ, ունենք բոլոր ննարավորությունները՝ մեր  
մասնագետներին վոչ միայն տանելի, այլև տնտեսական-կեն-  
ցաղային բավարար կացության մեջ դնելու համար: Պա-  
կասություններն այս ասպարեզում զգալի չափով բացա-  
տրվում են մեր կազմակերպությունների անձարակությամբ  
և իրենց մասնագետների հասարակական պասսիվությամբ:  
Մասնագետների համար ճաշարանների և այլնի կազմակեր-  
պում, բնակարանային շինարարության ծավալում և ընդ-  
հանրապես մասնագետների համար մշակված հատուկ ար-  
տոնությունների ոեալիցացիա, —ահա խնդիրներ, վորոնց  
իրագործման պիտի լծվեն մեր տնտեսական-պրոֆեսիոնալ  
որդանները և մասնագետների կազմակերպությունը:

\* \* \*

Ընկերներ, չնայած ընթացիկ մի շաբթ դժվարություն-  
ներին, մեր տնտեսական և կուլտուրական վերելքի տեմպը  
գնալով արագանում ե: Մեր վերելքի կարևորագույն մի  
արտահայտությունը գործադրկության լիակատար վերա-  
ցումն է մեր յերկում, և այդ այն ժամանակ, յերբ կա-  
պիտակատական յերկըներում յուրաքանչյուր ամիս ա-  
վելանում են գործազուրկների հարյուր հազարավոր բազ-  
մություններ: Այդ պայմաններում նկատի ունենալով  
կապիտակատական յերկըներում թափառող, իմակերիալիստ-

ների և նրանց սպասավորների՝ դաշնակների քաղաքակար-  
նության զոհ հայ զաղթականների զրությունը, նկատի  
ունենալով աշխատող ուժի պահանջը մեր վիթխարի շինա-  
րաբության համար, մեր կառավարությունը վորոշել է  
թույլատրել գաղթականների կազմակերպված ներդադթը  
չայստան, վորոշ պլանով և վորոշ ժամանակում:

Դաշնակները, վորոնք յերեկ անվերջ չարաշահության  
առարկա եյին գարձել ներգաղթի հարցը, այսոր իրար են  
անցել և լավ իմանալով, վոր ներգաղթի կազմակերպման  
հետևանքով զրկվելու յեն թնդանոթի այն պահեստի մսից,  
վոր նրանք աճուրդի եյին հանում իմակերպարական շու-  
կաներում, զլուխները կորցրած արդեն ձայն են բարձրաց-  
նում ներգաղթի դեմ: Նրանք այնպես են ձեցնում, թե  
չեն հավատում ներգաղթի հնարավորություններին: Ի՞նչ-  
պես ե, վոր յերեկ գեմ եյիք ներգաղթին, խոկ այսոր ներ-  
գաղթ եք կազմակերպում, հարցնում են նրանք մեղ, Այս,  
յերեկ, յերբ գեռ չեք վերջացած գործազրկությունը մեր  
յերկրում, յերբ չեյին ստեղծված աշխատանքի և ապրուստի  
կայուն պայմաններ, մեջտեղ զնել անմիջապես ներգաղթի  
հարջ՝ նշանակում եր արկածախնդրություն անել: Իսկ այ-  
սոր, յերբ արդեն գոյություն ունեն անհրաժեշտ պայման-  
ներ, մենք պրոլետարական ոգնության ձեռք ենք մեկնում  
այն մասսաներին, վորոնք այնքան տուժել և զրկանքների  
յեն յենթարկվել իմակերխալիզմի և նրա լակեյների վոճրագործ  
քաղաքականության շնորհիվ:

Մենք ընդունում ենք հայ աշխատավորներին, վորոնք  
ազնվորեն ցանկանում են լծվել սոցիալիզմի կառուցման  
և զրա ճանապարհին ընկած դժվարությունների վերացման  
մեծ գործին, ընդունում ենք վարպես մեր պրոլետարական  
հասարակության իրավազոր և հավասար անդամ: Ներգաղթի  
հարցի այդ լուծումը նոր ազգակ պիտի հանդիսանա ար-  
տասահմանի հայ աշխատավոր մասսաների համար՝ ուժե-  
ղացնելու պայքարը միջազգային պրոլետարիատի սոցիա-  
լիստական հայրենիքի և նրա մասնիկը կազմող Առարդարային  
չայստանի թշնամիների դեմ, ազգայնական ամեն տիպի  
կուսակցությունների, մասսավորապես Դաշնության  
գերակցությունների, մասսավորապես Դաշնության

ջախիչ հարզած պիտի հանդիսանա դաշնակների համար:  
Յես ի դեպ կանգ առա այստեղ ներգաղթի հարցի վրա  
այն տեսակետից, վորպեսզի մեր մասնագիտական կազմերը  
նույնպես իրենց կողմից կոնկրետ միջոցներ մտածեն ներ-  
գաղթող մասսաներին ընդունելու և նրանց կենցաղի ու  
աշխատանքի կազմակերպման գործին իրենց մասնակցու-  
թյունը բերելու համար:

Ընկերներ, ղեկավարվելով լենինյան կուսակցության  
փորձված քաղաքականությամբ, մենք ձեռք բերինք պատ-  
մական նվաճումներ: Ամրանում, հորանում և կառուցվող  
սոցիալիզմի մեծ յերկիրը և նրա անբաժան մասը Խորհր-  
դային Հայաստանը: Հնգամյա պլանը կգերակատարվի:  
Մենք գտնվում ենք նոր հնգամյա պլան կազմելու աշխա-  
տանքի շրջանում: Արդեն նշանակում են այն հոկայական  
հեռանկարները, վոր բաց և անում մեր առաջ սոցիալիզմի  
կառուցման յերկրորդ հնգամյակը: Մեր յերկրում յերկրորդ  
հնգամյակը չի թողնելու և վոչ մի թիզ անմշակ հող, մեր  
լեռները հանքային նոր հարատությունների աղբյուրների  
կլերածվեն յերկրորդ հնգամյակում: Մեր յերկիրը պետք է  
վերածվի սոցիալիստական ինդուստրացման և եկեկտրիֆի-  
կացիայի որինակելի յերկրի: Մեր աշխատավորական մաս-  
սաները կենցաղային, կուլտուրական հոկայական թաիչք  
են կատարելու՝ պատմության գիրկը թողնելով՝ անդրագի-  
տությունը, հետամնացությունը, աղքատությունը և կա-  
րիքը:

Յես վերջացնում եմ հաստատ համոզումով, վոր մեր  
ինժեներները, տեխնիկները, գյուղատնտեսները — մեր  
մասնակետների ամենալայն մասսաները, բանվոր դասա-  
կարգի հետ ձեռք-ձեռքի, մեր կուսակցության ղեկավարու-  
թյամբ ավելի ակտիվորեն կլծվեն սոցիալիստական շինա-  
րարության հոյակալ աշխատանքներին և միանգամ ընդ-  
միշտ ու անվերապահորեն կլինեն մեղ հետ միասին կոմու-  
նիզմի վերջնական հաղթանակի համար մղվող պայքարի  
գիրքերում: (Բուռն և վորոտընդուտ ծափահա-  
րություններ):

## Ց Ա Ն Կ

Եջ

- |  |  |
|--|--|
| <p>Հարգածային լուսաշխատավորների Համահայաստանյան Հ-րդ համագումարում 1933 թ. հունիսի 20-ին<br/>արտասանած ճառը . . . . .</p> <p>Մեր իդեոլոգիական պայքարի հիմնական խնդիրները (կուլտպրոպեաժինների վարչէնների խորհրդակցությանը 1932 թ. հուլիսի 4-ին արտասանած ճառը)</p> <p>Կոմակաղեմիայի տասնորյակի բացման նիստին 1932 թ. մայիսի 15-ին արտասանած ճառը . . .</p> <p>Ավելի ակտիվ մասնակցություն բանվոր դասակարգի աշխատանքին ու պայքարին կապիտալիզմի ընդհանուր սնանկացման և սոցիալիզմի հաղթանակի ետապում (Խորհրդային Հայաստանի ինժեներատեխնիկների և գյուղատնտեսական մասնագետների համագումարում 1931 թ. սեպտեմբերի 28-ին արտասանած ճառը) . .</p> | <p>3</p> <p>19</p> <p>40</p> <p>49</p> |
|--|--|



**Մրտգրիչ 1. Արավյան**  
**Հանձնված և արտադրության 10 հուլիսի 1933 թ.**  
**Ստորագրված և սպազրելու 17 հուլիսի 1933 թ.**  
**Գլավիթ 7759 (թ.) Հայտ. № 124.**  
**Գոտվելու № 11. Ցիրած 5000.**

---

**Կուտերտակ ապահան. Ցերելվան. 145,000 առ. թօ.**

ՀՀ Ազգային գրադարան



NL0418745

ԳԻՒԸ 50 ԿՈՊ.



Ա. ԽԱՆՋՅԱՆ

Основные задачи нашей  
идеологической борьбы  
Партиздан 1933 Эреванъ

9(47.92  
In - 20



8932